



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

10775

1903

891.99  
14-29



Անհոգ զարդիթիւնեան իշխանական  
ԵՐԳԵՐԸ

# „ԵԽՐՎԱՆԻ“

ԻՄ ՓՈՔՐԻԿ ԳԻՐՔԸ

ՀԱՏՈՐ Ա.



Վ. Ա. Դ. Ա. Բ Ժ Ս Պ Ա Ց

Տպարան Մայր Արքուոյ Մրգոյ Եղմիածնի

1903

891.99 № 565

Խ-22

ԱՆ

ՂԵՐՈՒՄ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԿԱՇՊԱՍԵԱՆՑԻ ԵՐԳԵՐԸ

# “Ե Բ Ք Վ Ա Ա Ե Ի”

ԻՄ ՓՈՎՔԻԿ ԳԻՐՔԸ

ՀԱՏՈՐ Ա.



Ա. Ա. Դ. Ա. Բ Շ Ա. Պ Ա

Տպարան Մայր Արոռոյ Մելոյ Էջմիածնի


1903

Дозволено цензурою, 19 Декабря 1902 г. Тифлисъ.




32854-4. h.  
35 ) 15330-58  
42

2003



\* \* \*



Երցրնւ և կարդա իմ փոքրիկ դերքը,  
Զեռքիկ վարդ ու նունուֆար պիտի դառնայ.  
Թէ աւելացել է քո ցաւն ու վէրքը,  
Դիր ցաւերիկ վերայ ճար պիտի դառնայ:

Մի մարդ որ կողոպտէ, զրկէ ընկերին,  
Նրանով պահպանէ իւր որդիներին,  
Նրա որդիներն դուր չեն դալ ծէրին,  
Նրանցից ինչ հայր ու մայր պիտի դառնայ:

Որո՞մն ցանես, ցորենի հասկ չի դուրս դալ,  
Թուղի ծառից փուշ ու տատառկ չի դուրս դալ,  
Չար լեզուից՝ լաւ, բարի խօսք չի դուրս դալ,  
Չարիցը ձնւողը չար պիտի դառնայ:

Ծուռն պիտի դնա իւր ծուռութիւնով,  
Գործերն չի տանիլ իւր դիւրութիւնով  
Անձն էլ կը խաւարէ իւր կուրութիւնով  
Մեղքն մեղքի վերայ սար պիտի դառնայ:

Ղեսնդ, ծուռն թողնելով իւր լսածը,  
Էլի պէտք է անէ իրա ասածը.  
Դու միշտ յիշիր քո ստեղծող Աստուածը,  
Մարմինդ հող՝ նշանդ քար պիտի դառնայ:

ԱՌՎԱ ՄԱՐԴԻ.



Վ մարդ թէ ընկել ես դու մեղքերի մէջ,  
Մի ուշանար, չուտ ապաշխարող եղիր,  
Քո դեղն կը գտնես սուրբ դրքերի մէջ,  
Աշխատիր վէրքերիդ դեղ ճարող եղիր:

Ստեղծողից ինդրիր մեղքիդ թողութիւն,  
Առողջութիւն, և դորձիդ յաջողութիւն,  
Եղբայր, դու մի սիրիր երբէք գողութիւն,  
Աշխատիր մեղքերէ գադարող եղիր:

Ուղիղ ճանապարհից երբէք մի ծռուիր,  
Հարևանիդ, ընկերիդ հետ մի կռուիր,  
Կեանըիդ լսդնա, մեղքերի մէջ մի լսրուիր,  
Աշխատիր լաւ, բարի կեանք վարող եղիր:

Անդութ, ժլատ, չար մարդկանցից հեռացիր,  
Աղքատ, տնամիկ, խելզ որբերին տիրացիր,  
Բարի, խելօք, լաւ մարդկանց ընկերացիր,  
Աշխատիր բարի դորձ կատարող եղիր:

Սիրելիս, մի լինիր երբէք շատ խօսող,  
Կամ շատերին մատնող և շատ բամբասող,  
Եղիր բարի խրատների շատ լսող,  
Աշխատիր լսող և կատարող եղիր:

Դեսնդ, այս է քեզանից իմ խնդիրքը,  
Որ չի կորցնես քո՝ բնական ձիրքը,  
Գիշեր ցերեկ դու քո՝ այդ փոքշիկ դիրքը,  
Աշխատիր խօսքերով զարդարող եղիր:

ՄԻ ՊԱՐԾԵՆԱՔ ԱՌՎԱ ԾԵՆԱ.Ք.



Ի պարծենաք հագուստներով փառաւար,  
Զեղի ոչ մետաքսը ոչ շալ կը մնայ.  
Այս աշխարհն ունայն է և անցաւոր,  
Ոչ ցնծութիւն, և ոչ ինդալ կը մնայ:

Պատրաստուեցէք, թող ոչ ով չծուլանայ,  
Ականչ արէք, թող ոչ ով չխռուանայ,  
Կը դայ մի օր, ծնկներդ կը թուլանայ,  
Ոչ զօրութիւն, ոչ ջան, ոչ հալ կը մնայ:

Մի օր էլ կը կանդնի դլսիդ հոգեհան,  
Հոգիդ կառնի, քեղ կը թողնի անկենդան,  
Դու կը դնաս, քեղ հետ էլ և ամեն բան,  
Լաւութիւն, վատութիւն, տուրք տալ կը մնայ:

Անիրաւ, աներկիւզ, անմիտ ագահը,  
Ամեն օր վինարում է իւր մարմայ շահը.  
Շուտով մի օր վրա կը հասնի մահը,  
Նորան էլ ոչ դովլաթ, ոչ մալ կը մնայ:

Դեսնդ, դու պատրաստուիր, կը դայ քո հերթը,  
Վերադ կը կարդացուի հոգոցի թերթը.  
Քեղ կը գնեն խոնաւ ու խաւար բերդը,  
Հող կը դառնաս, վրադ մի սալ կը մնայ:



ՍԻՇ ԾԱԽԼԱՆԱՐ.



Ե ծուլանար սրդեակ, շուտ ելիր սաքի,  
Աղհեստ սիրէ, գործ սիրէ, ընկեր սիրէ,  
Ուշ ու միտքդ տուր միշտ ժամի, աղօթքի,  
Ժամտում սիրէ, վանք սիրէ, պատկեր սիրէ:  
Վերկաց շուտով գնա դու ուսումնարան,  
Կարգան Աստուածաշունչ և Աւետարան,  
Թէ ուղում ես օքնէ քեզ ամեն բերան,  
Վարժարան սիրէ, վարժապետ սիրէ ծեր սիրէ:  
Ել շատ մի ուշանար, բարձրացիր վեր կաց,  
Տուն ու տեղիդ վերայ՝ իշխիր, և տէր կաց.  
Քաջարի տղամարդ, խաղաղասէր կաց,  
Հայրենիք սիրէ, եղբայր սիրէ հեր սիրէ:  
Սիրելիս, աշխատիր սուրբ գրքեր սիրիր,  
Կարգան սուրբ խօսքերն՝ սրտիդ մէջ գրիր,  
Յուսով և հաւատով Տիրոջը խնդրիր,  
Յոյս սիրէ, հաւատ սիրէ, սէր սիրէ:  
Դեսնդ շատ սէր մի տուր հագուստին՝ փողին,  
Յանկարծ կը հասնի մահ, կը զոհւես հողին,  
Նայիր բարձրին, միշտ փառք տուր Ստեղծողին,  
Երկինք սիրէ, Աստուած սիրէ, Տէր սիրէ:

ՀՊԱՐՏՄԱՆ ԴՐԱԽՆԱՐ.



Վ մարդ չափից գուրս ել մի հպարտանար,  
Պճնուած թանկագին ալ ու ատլասում,  
Աշխարհիս առլանքով շատ մի պարծենար,  
Ականչ արա խօսքիս, տես ինչ եմ ասում:

Այս ապրանքն միշտ պյատեղ մնացող է,  
Մարդը նրան թողնող և գնացող է,  
Սկզբիցն հող էր, վերջն էլ հող է,  
Ամեն օր չի մնալ թանկագին խասում:

Այս աշխարհն շատ օրեր է անցրել,  
Շատ գիտուններ և կուգեր է անցրել.  
Քեզ նման անթիւ հիւրեր է անցրել,  
Դու վերջինն ես հիմա քեզ է սպասում:

Աղձակ, լայնատարած, մեծ տեղեր ունի,  
Տեսակ տեսակ աղդեր և ցեղեր ունի.  
Շատ մարդիկ, քաղաքներ և գեղեր ունի,  
Դաստորած պահած ամեն մի մասում:

Նա շատերին սրսում ճամբու է գնում,  
Նրանց տեղը նոր հիւրեր է ընդունում.  
Ամեն օր շարունակ գալիս են գնում,  
Գեռ աւելանում է, որ չի պակասում:

Շատին էլ իւր կարմիր օրերից զրկում,  
Բոնում ու յաւիտեան կորուստ է զրկում.  
Ամենքին է տանջում, մէկին չէ փրկում,  
Ոմանց էլ կենդանի կեանքն է վնասում:

Մեր կեանքն հինգ օր է, կէս մասն սկ է,  
Զկարծես մինչեւ վերջ կարմիր կը տեէ.  
Զուր մի ընկնիր հպարտութեան հետեւ,  
Երբեմն էլ դժնուիր ծունամ և պասում:

Դեսնդ, գու չես դառնալ խօսք կապող շայիր,  
Դու քո իմացածն քեզ համար պահիր.  
Այնպէս մարդու վերայ երբէք մի նացիր,  
Որ հպարտ է, անձն միշտ վեր է դասում:

Ա.ՄԲԱ.ՐԻՇՏ ՄԱ.ՐԴՈՒՅ.



Վ մարդ, ամբարշտութիւնից փախիր, հեռացիր,  
Ամբարշտութիւնը քո գլխիդ ցաւ կը դառնայ,  
Այդ բնութիւնը սրտիցդ հանիր, մոռացիր,  
Թէ չէ՝ ամբողջ աշխարհին չաւ կը դառնայ:

Զար դործերի մէջ երբէք ուրախ մի լինիր,  
Հեռացիր չարիցն, անվախ մի լինիր,  
Ամբարիշտ, խռովարար, խարդախ մի լինիր,  
Խռովութիւնը գլխիդ՝ կոխւ ու դաւ կդառնայ

Այս աշխարհը մէկ ալեկոծման ծով է,  
Մարդիկ կուգան, կերթան, մնացողն ով է,  
Ով մարդկանց հետ կուտէ, և միշտ խռովէ,  
Նրան տատանւող ու խեղդող նաւ կդառնայ:

Աշխատիր մարդկանց հետ միշտ սիրով վարուիր,  
Ամբարշտից, չարից միշտ հրաժարուիր,  
Քո ստեղծողիդ հնազանդուիր, խոնարհուիր,  
Կը յաջողվէ բանդ, և լաւ կը դառնայ:

Կը դան ու կանցնեն կենացդ օրեր,  
Կը հինանայ աչքիդ՝ քո ամեն նորեր,  
Կը հանեն վրայիդ թանկագին շորեր,  
Լաւ հագուստդ հինդ դադ՝ կտաւ կդառնայ:

Կը խաւարուի մի օր աչքիդ ամեն բան,  
Կը մնաս վայր ընկած անշունչ անկենդան.  
Քեզ կը տանեն և կը դնեն գերեզման,  
Մարմինդ կը փտի, հող ու կաւ կը դառնայ:

Ղեռնդ, ով օր ամբարշտութեան մէջ կը լինի,  
Դժոխքը նրան վառ ու անշէջ կը լինի.  
Աշխարհս էլ կանցնի և վերջ կը լինի,  
Նրա հոգին սատանին դրաւ կը դառնայ:

Մ Ա. Բ Դ Կ Ա Յ 3.



արդ կայ՝ եթէ նրան մի անդամ ասար,  
Կը հասկանայ նա՝ հազար մի անդամ.  
Մարդ կայ թէ ասես էլ մի անդամ հազար,  
Կը հասկանայ էլի դժուար մի անդամ:

Մարդ կայ դիմնական ստացած մեծ ուսում,  
Խաւարիցը հեռու ման կը դայ լուսում.  
Շատ լսում է, կարճարօտ ու քիչ խօսում,  
Ստացել է խելք ու յանձար մի անդամ:

Մարդ կայ որի շատ սիրած բանը փող է,  
Սուտ-սուտ երդումներով միշտ մարդ խարող է.  
Փողով հօգին ու հաւատը կը փոխէ  
Եւ կը դառնայ կրակի պաշար մի անդամ:

Մարդ կայ չի բարկանալ միշտ կը համբերէ,  
Ոխ չի պահի, իւր թշնամուն կը ներէ,  
Որբին, խեղճին, կպահպանէ կը սիրէ,  
Եւ կստանայ անուն պայծառ մի անդամ:

Մարդ կայ ինքն չի սիրի անել բարութիւն,  
Այլոց էլ կը սովորեցնէ անել չարութիւն.  
Զի ըմբռնիլ կեանք, մահ, ոչ էլ յարութիւն,  
Նա վայր կընկնի վատ ու վատթար մի անդամ:

Մարդ կայ քանի որ կեանք ունի կենդան է,  
Վատութեան փոխարէն լաւութիւն կանէ,  
Իրա ունեցածից բաժին կը հանէ,  
Կը կանաչ ու կտայ բար մի անդամ:

Մարդ կայ սիրաը դարձրել է լեռ քարի,  
Ուշ ու միտքն տուել չար ճանապարհի,  
Ցետ չի դառնում շատ ամիսներ ու տարի,  
Նրա սիրտն մտել է չար մի անդամ:

Մարդ կայ մեզաւոր է, ունի շատ մեղքեր,  
Ապաշխարռում է միշտ՝ ցերեկ և գիշեր,  
Քրիստոն՝ ողօրմած և մարդասէր,  
Կը տայ նրա ցաւերին ճայ, մի անդամ:

Մարդ կայ Մարդու Որդուն արծաթով ծախեց,  
Մատնեց, խաչեց և աղիւնով շաղախեց,  
Կախաղանի վերայ ինքն իրան կախեց,  
Խեղդուեց ու գնաց խաւար մի անգամ:

Մարդկանց՝ և աշխարհի Փրկիչ է,  
Երկնքի և երկրի լոյս քարողիչ է,  
Օրէն հաղար թէ փառք տանք նրան քիչ է,  
Եկաւ ու խաչուեց մեզ համար մի անգամ:

Մարդ կոյ՝ Դիսնդ, մեղաւոր և յահցաւոր,  
Ապաշխարիք գու էլ աեսնես մի լաւ օր.  
Այս աշխարհը ունային է և անցաւոր,  
Կուրծքիդ վերալ կեսնդնենի քառ մի անտարչ.

Ա-Խ Ի-Ն-Զ Ա-Ն-Ե-Ր Ա-Լ-

անկարծ ձեռքիս միջից թե առաւ թռաւ,  
իմ թառլան թռչունս՝ այս ինչ անեմ ես,  
Ուրախութիւնս վրաս ու արաւ դրաւ,  
Քանդեց գլխիս տռւնս, այս ինչ անեմ ես:

Օրս սեցուց, ինձի ահճրագ թողեց,  
Այլեց լեարդս, օրտումս կրակ թողեց.  
Քանդեց տանա խոպառ՝ աւերակ թողեց,  
Զնչեց իմ ահունս, ախ ին, անեմ ես:

Սիրտս լցուեց բարձրացաւ սաշի պէս,  
Շատ կոշտացաւ կարծրացաւ քաշի պէս.  
Կեանըս մաշուեց, բարակացաւ լարի պէս,  
Միջից կոտրուեց սիւնս՝ միս ինչ անեմ եռ

Գիշեր ցերեկ սիրոս հալում մաշում եմ,  
Ոչ ուսում, ոչ խմում և ոչ ճաշում եմ.  
Անհամբեր ճամբէրին ես միշտ աշում եմ,  
Ել չի տանում քոնո, այս ինչ անեմ ես:

Հասաւ ձմեռ, ես մի հատիկ մնացի,  
Գարնանը անվարդ՝ անզատիկ մնացի,  
Ամառը գլխաբաց՝ բորբկ մնացի,  
Խաւարուեղ աշունս, ախ ինչ անեմ եռ-


Արի աղաւնեալս, տես ուր եմ ապրում,  
Առանց քեզ հսդեալս, ես զուր եմ ապրում,  
Սիստ միշտ լալս է ախուր եմ ապրում,  
Գնազ ուրախութիւնս, ախ ինչ անեմ ես:

Դեսպան թուչունիս լաւ ճանաչելով,  
Զեմ գագարում երբէք՝ նրան կանչելով.  
Նրա համար անձո՞ կեանքս տանջելով,  
Յամբեցաւ այլինս, այս ինչ անեմ եւ.



զ խարերայ տշխարհ անարդարագատ,  
Քանի մարդ խարելով գցար թրոխդ մէջ,  
Աչ լուսին լուս ասար, և ոչ վասին վաս,  
Եատ թագերին էլ պրեսից չորխդ մէջ:

Մարդկանց կրակեցիր բարձրացաւ ըոցն,  
Զկորեցիր նոցանից քո լաց ու կոծն.  
Բաց անելով քո մութ ու խաւար ծոցն,  
Բոլոր հանդիպողաց խեղդար հորիդ մէջ:  
Ոմանց խարելով մեղանչել թոյլ տուեցիր,  
Որը մէկ տուն շինեց, գուն փուլ տուեցիր.  
Որտեղ լաւ մարդ տեսար շուտ կուլ տուեցիր,  
Ողջ արարած աշխարհ՝ տուար փորիդ մէջ:  
Դու շատերին քաղցրացնում ես դանձովդ,  
Բոնում ու պինդ փաթաթում ես ցանցովդ.  
Ուզածիդ պէս քշում ես քո սանձովդ,  
Զգում մութ ու խաւար քո սև օրիդ մէջ:  
Անհովիւ տեսնելով հովուեցիր հօտը,  
Կամաց-կամաց, մէկ-մէկ, կտրեցիր ստը.  
Այնպէս կորցրիր որ՝ չեկաւ հօտը,  
Ղետնդին էլ ձգեցիր խորիդ մէջ:



### Ա.ՆԻՐԱԿԻ ԲԱՂԻ.



Դ զու բաղդ անիրաւ՝ և փոփոխական,  
Այնչափ նեղանում եմ ես քո մի բանից.  
Եատ յիմարներ դարձնում ես բանական,  
Խելօքները շնում անբան անբանից:  
Ում հետ հակառակուես, բանն կը ձախես,  
Թանկ կեանք ու արեն էժան կը ծախես,  
Բաներն կը խառնես և կը խարդախես,  
Կը շննես աւարտ ամենայն բանից:  
  
Դու լաւ մարդկանց հետն միշտ թշնամի ես,  
Կը գաս ու շուտ կանցնես, գատարկ քամի ես.

Դառն, թթու, տեսակ-տեսակ համի ես,  
Անկարդ ու անկանն՝ դուրս ես սահմանից:

Քեզ ով ասաւ այդքան անիրաւ դառնաս,  
Դործո շինելու տեղ՝ զլիխ ցաւ դառնաս.  
Ի՞նչ կը լինի մի օր փոխուես լաւ դառնաս,  
Ազտաես ինձ և դուրս բերես՝ զնդանից:

Ամօթ քեզ որ այսքան ժամանակ քնար,  
Ինձ գրիր բանտ՝ ոչ սպանար, ոչ հանար.  
Քո այդ վատութիւնը քեզ էլ չի մնար,  
Զրկեցիր ինձ հայրենիքից և տանից:

Օտար տեղ էլ գու միշտ սև արիր օրս,  
Մաս-մաս կանէի քեզ, թէ պատեր զօրս,  
Անխղճմտանք, գոնէ խղճա եղբօրս,  
Ո՛չ խեր տեսնես դու ահեղ դատաստանից:

Շատ մարդկանց ծանօթ ես, գիտեն անունդ,  
Եթէ տեղդ գտնեն, կը քանդեն տունդ,  
Խաչպանեանցո ասում եմ բնութիւնդ,  
Հոդ չէ, թէ կուզ նեղանաս էլ ինձանից:



(Նամակ իմ սիրելի հայր Յարուբիւն Խաչպանեանցին,  
Սաղիան զիւղի տանուտէր)



ախ քանի խօսքս գրում եմ կարճարօտ,  
Մի վախենար հայր իմ կը ջանամ կը դամ.  
Մնացել եմ քեզ ու հայրենիքիս կարօտ,  
Քիչ տկար եմ, թէ առողջանամ կը դամ,

Հասցէ նամակս իմ հարազատ եղբօրս,  
Կարդա միիթարէ իմ ծերուկ հօրս.  
Ինձանից շատ բարե քոյրերիս, մօրս,  
Զեր որպիսութիւնն թէ իմանամ կը դամ:

Այս ըսպէս ես անկողնում պարկած եմ,  
Խելագարի պէս՝ ձեռ ու ստո պար կածեմ.  
Թէ ժողովեմ այս ցաւն մի պարկ ածեմ,  
Աստուծով անկողնից վեր կենամ կը դամ:

Սրտով ցանկանում եմ քո ձեռն պաղնեմ,  
Ուրախ լեր հայր, ես քո պարծանք ու թաղն եմ.  
Անկողնից վեր կենամ շորերս հադնեմ,  
Թէ ինձ առողջ տեսնեմ՝ ուրախանամ, կը դամ:

Գիշեր ցերեկ մահը իմ առաջին էր,  
Նոր ցաւեր ստացայ, մոռացայ հիներ.  
Անկարելի բան է, այդ պէտք է լինէր,  
Այս ցաւերից եթէ աչք բանամ կը դամ:

Յուտով եմ գեռ հոգիս շառած հոգեհան,  
Էլ յետ արժանանամ ես մանեմ Սաղիան,  
Այստեղ պիտի թողնեմ իմ վերջին նշան,  
Միայն ուրախանամ, լիանամ կը դամ:

Իմ նամակիս մի պատասխան գրեցէք,  
Մէկ ուրախ լուր, կամ մի նոր բան գրեցէք,  
Սերտ բարեկամք ինչպէս որ կան՝ գրեցէք,  
Զեղանից մէկ նամակ ստանամ կը դամ:

Խնդրում եմ միամստութեան մասին,  
Որպիսութիւն գրեցէք մեր տան մասին,  
Ես էլ շուտով կամ զատկին, կամ պասին,  
Սուրբ Յարութեան թէ արժանանամ կը դամ:

Հօրեղբօրս որդի ներսէսին ես,  
Չմոռանաք յիշել իմ շատ բարես.  
Ասէք որ սաստիկ հիւանդ եմ գեռ ես,  
Այս ցաւովը թէ չմահանամ կը դամ:

Թէ գրելու լինեմ, ցաւերս շատ են,  
Գործերս ողջ թերի և անհաստատ են,  
Բժիշկը եթէ ինձ այս ցաւից աղատեն,  
Ռուժ ստանամ մի քիչ զօրանամ, կը դամ:

Հաղար ինը հարիւր՝ ամիսն յուլիս,  
Նամակս գրեցի ի քաղաքն թիվլիս,  
Բարի ճանապարհն բացուի առաջիս,  
Մինչեւ գարուն եթէ ողջ մնամ, կը դամ:

Մնամ նուաստ ծառայ քո որդի Ղեանդ,  
Իմ հայրիկիս միշտ խոնարհ և հնաղանդ.  
Քո կարօտով մնում եմ պառկած հիւանդ,  
Ազօթիր բժշկուեմ, լաւանամ՝ կը դամ:

\* \* \*



Մեղծել է Հայ ինձ Աստուած,  
Մեղաւոր եմ վայ ինձ Աստուած.  
Այս գարդն տանել չեմ կարող.  
Շուտով մի մահ տայ ինձ Աստուած:

Յուտով լի հաղար ջանս,  
Մահուան է յօժար ջանս.  
Տէր իմ, կամ կեանք պարզեիր,  
Կամ թէ շուտով առ ջանս:



ԴՕՇՄԱՅ.



տեղծողից յուսով խնդրում եմ մի բան,  
Յոյս ունեմ խնդիրքս չմնայ անկատար.  
Հոգո ու ցաւի ձեռից դառել եմ անբան,  
Յուսամ որ Սատուած կտայ ինձ դադար:

Գիշեր ցերեկ նեղութիւն ու տանջանքը,  
Կէս են արել ու մաշել են իմ կեանքը.  
Յոյս ունեմ որ լսի իմ աղաչանքը՝  
Նա՝ որ միայն ողորմած է և արգար:

Նա է միայն մեղաւորաց ներողը,  
Նրանց սրտին ուրախութիւն բերողը.  
Նրան յօյս կապողն ու համբերողը,  
Մինչեւ վերջը չի մնալ անմիթար:

Սիրտս լի ցաւերով մէկը միւսից վատ,  
Զարչարում են ինձի և տանջում են շատ.  
Ով մարդասէր Փրկիչ՝ աշխարհիս մի հատ,  
Խեղճ Դեսնդիս ցաւին հասցրու մէկ ճար:

—♦♦♦♦—

Ե Ր Գ.



մեն անդամ երբ յիշեմ իմ երկիրը,  
Հառաջելով պիտի ախ քաշեմ լացեմ.  
Եւ երդելով իմ սրտաշարժ երդերը,  
Աղի արտասուրով աչքերս թացեմ:  
  
Մտածում եմ, հառաջանքներ արձակում,  
Արդեօք կլինի ինձ պէս անբաղդ արտած,

Թռչունի պէս փակուած տիսուր վանդակում,  
Խոնաւ ու մութ բանտի մէջ եմ բանտարկուած:

Տանջում է ինձի միշտ իմ խոճմտանքը,  
Մի վայրկեան դնեէ չէ տալիս դադար,  
Խաւարւում է օրս, մթնում իմ կեանքը,  
Այս եմ քաշում և հառաջում անդադար:

Դառն արտասուրը խեղդում է ինձի,  
Վայր ձգում ցաւադար հիւանդի նման,  
Ցաւն զօրանալով՝ յաղթում է ինձի,  
Արդեօք կայ մի օտար Դեսնդի նման:

(352)

15330-58

ՔԱՐՄԱԿԻ (կամ Պօտմայ).



Եմ պարտիզում որ տնկեցի շատ ծառեր,  
Զտեսայ նրանից ես մի բար անդամ,  
Ում նուշ տալի, տուաւ ինձ քիրանք, քարեր,  
Որ ինձնից չէր լսել մէկ յիմար անդամ:

Տետրակ ուզողին տուի և իմ գրքերը,  
Կարեացս չափ դարմանեցի վէրքերը.  
Լուանալով ինձնից նա իւր ձեռքերը,  
Յոյց չտուեց ինձ մի գրչածայր անդամ:

Այնպէս մարդուց կրեցի ես վնասը,  
Որից չմնայեցի իմ բաժին մասը,  
Որն որ ինձանից ամենապակասը,  
Լաւութիւն էր տեսել մի հաղար անդամ:

Անունս Դեռնդ է ես Շիրվանեցի,  
Եօթը տարի օտար Երկրում բանեցի.  
Ում պարտիզում վարդ, մանուշակ ցանեցի,  
Տեղն՝ չեսայ մի սուսամբար անդամ։



Ա Զ Ք Ի Լ Ա Ց Ա.



Հքի լոյս, Ասեցի քեղ՝ իմ արած ջանքը,  
Էս եմ անում, էս եմ անում, էս,  
Ասեցի և քո մասին իմ քաղցր կեանքը՝  
Կէս եմ անում, կէս եմ անում կէս։  
Քանի անդամ Քեղ նամակներ գրեցի,  
Փորձանքներից քեղ զգուշացրեցի.  
Անուն ու պատիւդ բարձրացրեցի,  
Չես իմանում, չես իմանում, չես։

Մարդկերանցով լիքն է Երկիր, աշխարհ լայն,  
Ամենքն իրանց համար, ես ինչ կանեմ այն։  
Ողջակէղ և մատաղ իմ անձս միայն՝  
Քեղ եմ անում, քեղ եմ անում քեղ։

Խաւարեցրիր դու իմ կարմիր արել,  
Ամօթալի թողիր մարդկանց առջել.  
Կարմիրը դուրս՝ քեղի համար ես սել՝  
Ներս եմ անում, ներս եմ անում ներս։

Չինայելով ես քեղանից իմ անձս,  
Չոհեցի, փչացրի նաև իմ դանձս.  
Խմացիր այս բանը՝ ես Խաչպանեանցա՝  
Ես եմ անում, ես եմ անում ես։



Դ Ա Խ Բ Է Ի Դ Գ.



ոլոր արարած աշխարհի՝  
Լոյսն արևելքն կը ծագէ,  
Սիրտն շատ բաներ կը խորհի,  
Բուն բանը խելքն կը ծագէ։

Մաքի յոյժ ազատութիւնը,  
Կընդարձակէ գիտութիւնը.  
Բնական վարդետութիւնը՝  
Մարդու սուր մտքն կը ծագէ։

Ով պահէ նախնեաց սուրբ վարքը,  
Նա կը մտնէ մարդկանց շարքը.  
Մարդուս պատիւն ու փառքը,  
Իրա սուրբ վարքն կը ծագէ։

Հոգւով անբիծ անարատը,  
Կընդունէ հարանց խրատը.  
Բարի գործոց բուն արմատը՝  
Դեռնդ սուրբ գրքն կը ծագէ։



Ս Ի Ր Ո Յ Ե Ր Գ.



Է կը սիրես դու քո եղբօր արել,  
Արի ինձ մի տանջիր, ով նազելի կոյս.  
Մի կտրիր մեր քաղցր սիրոյ բարել,  
Քեղ եմ ապաւինել իմ կեանք և իմ յոյս,  
Ով իմ հոտով ծաղիկ և անթառամ բոյս։

Քո սիրովը իմ սիրտա էլ վառուեցաւ,  
Կրակ ընկաւ սրտիս մէջն այրուեցաւ.

Ուշ ու միտքս, խելքս դլիսէս տարութեցաւ,  
իմ ցաւիս ճար անէ միայն Տէր Յիսուս,  
Ով իմ հոտով ծաղիկ և անթառամ բոյս։  
  
 Քո անունդ տետրակիս մէջ գրել եմ,  
Քաղցր կեանքս սիրոյդ ճամփին գրել եմ,  
Ամեն տեղից սիրտ ու յոյսս կտրել եմ,  
Միայն քեզնով պէտք է տեսնեմ ես էլ լոյս,  
Ով իմ հոտով ծաղիկ և անթառամ բոյս։  
  
 Արի մտնենք մենք մարդկութեան առալարէզ,  
Գնանք ման գանք կանաչ խոտեր ու պարտէզ։  
Հագել ես նուրբ գեղին ծիրանի բեհէզ  
Կը խնդրեմ ինձանից չտաս խարս ու խոյս,  
Ով իմ հոտով ծաղիկ և անթառամ բոյս։  
  
 Քո սէրն ինձ արաւ քեզի հպատակ,  
Յուսամ քեզնով կատարուի իմ նպատակ,  
Վաղ մի սպանիր ինձ անիր նահատակ,  
Անմուրազ մի թաղիր ինձ խեղճ եղկելոյս,  
Ով իմ հոտով ծաղիկ և անթառամ բոյս։  
  
 Ծնեալ տեղս է Շիրվան, անունս Դեանդ,  
Քո սիրովը զարկուած, պառկած եմ հիւանդ։  
Թէ գառ ինձ տեսութեան, լինես հնազանդ,  
Կընդունեմ քեզ ինչպէս իմ զոյտ աչքի լոյս,  
Ով իմ հոտով ծաղիկ և անթառամ բոյս։



\* \* \*



օթը տարի անձիս չեմ ընդունել շահ,  
Ընդունէի ես էլ փող կունենայի։  
Ոչ զլկել եմ, և ոչ ձեւացել ադահ,  
Չեմ ծառայել փողի և մամոնայի։

Ով բոած է ճշմարտութեան արմատից,  
Կը հանէ մաս բաժին քչից կամ շատից.  
Ունեցածը խեղճերից և աղքատից,  
Նա ոչ կը թագցնի, ոչ կը խնայի։  
  
 Բարի դործերի մէջ սէր ունենալը,  
Զէ միայն սպիտակ հեր ունենալը.  
Ողորմած սիրտ՝ առատ ձեռ ունենալը,  
Ոչ մեծի կը նայի, ոչ երեխայի։

Բարեհոգի մարդն միշտ ողորմած է,  
Որտեղ մի խեղճ տեսնէ սիրտն կը լացէ.  
Կը խղճայ, իւր՝ առատ ձեռն կը բացէ,  
Կուրախացնէ սիրտն, նաև կը շահի։

Ղեանդ, կուղես ժլատ մարդուց հարցնել,  
Զի լինիլ նրան ուղիղ ճամբու դարձնել.  
Նա գիտէ իւր սիրտն կծկիլ քարցնել,  
Ոչ խեղճ կը ճանաչի և ոչ կը նայի։

Պ Ա. Ն Գ Խ Տ Ի Կ Ե Ա Ն Ք Ի Ց.



Վ սիրելիք ոչ ոք պանդուխտ չլինի,  
Սիրտ կը քանդէ հառաչանքն պանդխտի.  
Գիշեր ցերեկ տիսուր տրտում կը լինի,  
Կը տանջուի, կմաշուի կեանքն պանդխտի։

Պանդուխտը ուր գիմէ մի տեղ չի գտնիլ,  
Ոչ մի բան իւր ուղած համեղ չի գտնիլ.  
Իւր վէրքերին դարման ու գեղ չի գտնիլ,  
Զուր տեղը կանցնի ջանքն պանդխտի։

Անշէջ է պանդխտի ցաւ ու կրակը,  
Հայրենիքի հողն է միակ փափագը.  
Յիշելով իրա ուխտ ու նպատակը,  
Կը տանջէ միշտ խղճմտանքն պանդխտի:

Պանդխտի շարժմունքը կամաց կը լինի,  
Սիրտը բարակ, և ձեռքը բաց կը լինի.  
Ա՛խ կը քաշէ և խկոյն լաց կլինի,  
Կարճ կը լինի համբերանքն պանդխտի:

Կերած հայը ցամաք ու չոր կը լինի,  
Խմած ջուրը անհամ և շօր կը լինի.  
Սիրտն լիքը, աչքն պղտոր կը լինի,  
Երկինք կելնէ աղերսանքն պանդխտի:

Եղբայր չունի, գնա սիրտը բաց անի.  
Սրտի ցաւը եղբօրը իմաց անի.  
Ամբողջ օրը կուղէ սուգ ու լաց անի,  
Սուգ ու լացն է զբոսանքն պանդխտի:

Նզովք կը կարդայ օտարութեան վերայ,  
Նայելով ապրուստի՝ գրութեան վերայ.  
Կը մտածէ միշտ հայրենեաց, տան վերայ,  
Զուր կը կորի աշխատանքն պանդխտի:

Կը հառաջի, կը արտասուի կը լացի,  
Անկողինը արտասուքով կը թացի.  
Ո՞ւմ գնայ աղաջի, ում դուռը բացի,  
Ո՞վ կը լսի աղաջանքն պանդխտի:

Հիւանդանայ վրէն կը ծածկեն դուռը.  
Դոնովք չեն մտնիլ ծնողքը, քոյրը.  
Սրտով կը ցանկանայ եղբօր համբոյրը,  
Ցատ դժուար է հանդամանքն պանդխտի:

Մէկը չի լինի գնա հարցնի հալը,  
Դիշեր ցերեկ հառաջանքն ու լալը.  
Սև քարից դուրս կը գայ բախտ ու իզբալը,  
Չի վերջանալ տառապանքն պանդխտի:

Թէ մեռնի՝ մայր չունի անէ լաց ու սուգ,  
Քոյր չկայ ու վրէն թափէ արտասուգ,  
Եղբայր չկայ դագաղին տայ զարդ ու զուգ,  
Աննշան է գերեզմանքն պանդխտի:

Ա՛խ, պանդխտութիւնը ցատ դժուար բան է,  
Հայրենիքը քաղցր հանդստարան է.  
Ղեռնդ խնդրիր Տէրից որ մի ճար անէ,  
Ել երկար չըաշես կեանքն պանդխտի:

Ա. Յ Ք Ե Զ Օ Ր Ի Ն Ա. Կ.

(Դօշամայ)



Նհասկացող մարդուն թէ անես պատիւ,  
Եւ դլսին էլ գնես գոհակաղուդ թագ,  
Կամ դափնեայ պսակ,  
Շուտով ինքն իրան կանի անպատիւ,  
Եւ դլսի պսակն էլ կտայ ոտի տակ.

Կը մնայ անդդակ:

Նա չի ջոկում արդէն իրա լաւն ու վատ,  
Եւ չի էլ հասկանալ լաւ խօսք ու խրատ.  
Ինչպէս քարէ արձան, կամ անդդայ պատ,  
Չի լսի խօսքերիդ անթիւ անքանակ,  
Ոչ մի ժամանակ:

Ով նրան ընդունի մարդու տեղ գնի,  
Ցաւ ու դարդին դարման անի դեղ գնի,

Պիտի նա յետ դառնայ վրէն մեղ գնի,  
Խօսի դառը, թթու, անհամ անտեղեալ,  
Եւ բոլորովին խակ:

Թէ նրան շատ պատուես, լաւութիւն անես  
Զեռքից բռնես դառը վիճակից հանես,  
Այնպէս կանէ դու ինքդ կը փոշմանես,  
Եւ կտաս քո գլխիդ՝ երեսիդ ապտակ,  
Երկար ու բարակ:

Թէ բերես նրան տաս քաղցր մեզր ու իւզ,  
Կը կարծէ իրանից կրում ես երկիւզ.  
Ոտն կդնի առաջ անվախ, աներկիւզ,  
Կը կանդնի քո գիմաց՝ հպարտ, համարձակ,  
Կը խօսի դարտակ:

Նրա լեզուն դառը սոխ ու սխտոր է,  
Խոկոյն մարդու արիւնն կը պղտորէ.  
Լաւութեան տեղ ոտիդ տակը կը փորէ,  
Յետ կդառնայ կը կանդնի քեզ հակառակ,  
Կանի խայտառակ:

Արած լաւութիւնդ նա կը կորցնի,  
Բաւական չէ՝ էլի քեզ հետ դործ ունի,  
Ուրախութիւնդ տիրութեան կը դարձնի,  
Կը խանդարէ քո դործերն շարունակ,  
Ճիշտ ու անկատակ:

Այդպէս մարդը չի ճանաշիլ իւր Տէրին,  
Կը անպատուէ մեծին, փոքրին և ծերին.  
Կը հայհոյէ ծնողաց և իւր մեծերին,  
Կը մոռանայ իւր ազգանուն, յիշատակ,  
Նաև հօր կտակ:

Թէ ընկար նրա հետ բնութիւնն տեսար,  
Նոյն ժամին կլինես նրանից բեզար.  
Թէ լաւութիւն անես օրէն մի հաղար,  
Նեղ օրերում քեզի կը թողնէ մենակ,  
Սենեակումդ փակ:

Նա ինքն էլ չի իմանալ իւր դարդը,  
Նրա համար միշտ սարքուկ է թակարդը.  
Չի հասկանալ սոխակ, չի ջոկիլ վարդը,  
Չի ունենալ օրտում ոչ ուխտ, ոչ փափադ,  
Եւ ոչ նպատակ:

Ով որ մի տեղ նրա հետ ընկերանայ,  
Շատ ցաւերի վշտերի կը տիրանայ.  
Դեռ իւր մատադ կեանքում շուտ կծերանայ,  
Մազերն կդառնայ ձիւնի պէս սպիտակ,  
Բոլորովին ձերմակ:

Մի մարդու՝ որ ընկերն լաւ ընկեր չէ,  
Արդէն նրա համար աշխարհը վերջ է.  
Այս կեանքումը նա վառ դժոխքի մէջ է,  
Որովհետև ընկեր ունի անառակ,  
Ընկել է կրակ:

Այդպէս մարդը մարդկութեան միշտ անհաս է,  
Մարդկային ազգութեան դա միշտ մնաս է.  
Դառնախօս է, լաւ խօսալուց միշտ պաս է,  
Պիտի դառնայ վերջն դող և աւազակ,  
Ազգին հակառակ:

Ոչ բան հասկացող է և ոչ յիմար է,  
Մարմնի աչքերն վառ՝ մոքով խաւար է.  
Վերջապէս չգիտեալ մարդ թէ տաւար է,  
Նրա համար ողջ մէկ է կամ սեր կամ կարագ,  
Կամ խոտ հասարակ:

Գիշեր, ցերեկ, երեկոյ և առաւօտ,  
Չէ խրատուել և մեծացել մարդու մօտ,  
Չունի ոչ մարդկութիւն, ոչ մարդկութեան հոտ,  
Անզգայ է, չի զգալ վարդ, մանուշակ,  
Սիրահար սոխակ:

Երբ նա իւր վատ արարմունքն տարած է,  
Ինքն իւր գլխին ամեն բան կատարած է,  
Պատճառն շատ անիրաւութիւն արած է,  
Եթէ չապաշխարէ, վայր կընկնի յատակ,  
Կը մնայ ոտքի տակ։

Ինչ մարդ որ չպահէ իրա սկստիւը,  
Չի պակսիլ նրանից դաւ ու կոփիւը.  
Մի օր կը վերջանայ նորա հաշիւը,  
Գլխին կփոտրուի գաւազան, մահակ,  
Եւ կուտի շատ թակ։

Վերջն ամեն տեղից կը կորուի ոտն,  
Ընկեր և հարեան չեն գնալ մօտն.  
Կը տարածէ իւր վատ գարշելի հոտն,  
Մի օր էլ ինքն իրան կը խփէ գանակ,  
Եւ կլինի սատակ։

Մարդկանց միջին՝ մարդկութիւնը մարդն ունի,  
Մաղկանց միջին՝ անուշ հոտը վարդն ունի.  
Ամեն մարդ իւր բնութիւնն ու գարդն ունի,  
Արարած աշխարհը լայն և ընդարձակ,  
Մարդիկ կան տեսակ-տեսակ։

Վատ մարդուն փորձով կարող ես ճանաչիլ,  
Նա Տէրից չի վախիլ, մարդուց ամաչիլ.  
Մի համարձակուիր նրան՝ նեղ օրում կանչիլ,  
Կը դայ կդարձնէ քեզ՝ իրան հպատակ,  
Կանի նահատակ։

Քո թանգ կեանքդ էժան գնով մի ծախիր,  
Այդպիսիներից հեռու կենալ յաճախիր.  
Անհասկացող մարդուց հեռացիր փախիր,  
Թէ չէ ասում եմ քեզ՝ ճիշտն ու շիտակ,  
Կը դառնաս առակ։

Դեռնդ, հերիք կարդաս դու քարոզ ու ճառ,  
Հասկացողն կը հասկանայ անպատճառ.  
Սնհասկացող մարդուն թէ ասես էլ հաղար,  
Էլի պէտք է քշէ իւր էշ աւանակ,  
Ամեն ժամանակ։

Ա. Ն Ն Մ Ա. Ն Ա. Վ Զ Ի Կ.



Ննման աղջիկ, աչքդ լոյս,  
Այսօր քեզ նշան են արել.  
Ուրախացիր, ով սիրուն կոյս,  
Բաղչաղ գիւլիշան են արել։  
  
Ուզած բանդ կատարել են,  
Եկող գացողք գագարել են,  
Տուն ու տեղդ զարդարել են,  
Պատդ զարնիշան են արել։

Մի վախիր չի կորչիլ ջանքդ,  
Պիտի լաւ անցկացնես կեանքդ.  
Տարածել են գովասանքդ,  
Մինչև Հինդստան են արել։  
  
Վրադ ունիս ակունք իսալիս,  
Բարեկամք ընծայ են տալիս.  
Խնամիքդ գնում գալիս՝  
Զեր տունը մեյդան են արել։

Անունդ ասեմ Վարդուհի,  
Իսկ ծագումով կշխանուհի.  
Շուտով կդառնաս թագուհի,  
Քեզի աննման են արել։

Նշանդ չնորհաւոր լինի,  
Ուղածդ բախտաւոր լինի.  
Ղեռդն քեզ քաւոր լինի,  
Ինձի պարտական են արել:

Մ Ա Խ Ա. Մ Մ Ա. Զ.



Բի մէկ գարդս հարցրու, տնւր գարդիս գարման  
սիրական,

Քո շափաղ երեսդ տեսնել՝ արա ինձ արժան սիրական,  
Ել չի լինիլ աշխարհում քեզ պէս անուշ բան սիրական,  
Կամ ինձնից նշան վերցրու, կամ տուր ինձ նշան սիրական,  
Ես չեմ տեսել իմ կեանքում էլ մի քեզ նման սիրական,  
Մորթում ես ինձի անդանակ, թողնում անկենդան  
սիրական:

Բոյդ բարձր, մէջքդ բարակ, ինքդ տասնհինդ տարեկան ես,  
Կուզեմ մի գաս հետս խօսես, թէ որ հաստատ սիրական ես,  
Դու հստով վարդ ու մանուշակ, շուշան, մեխակ բէյհան ես,  
Բաւական է ինձ չարչարես, տանչես մաշես, հոգիս հանես,  
Ջանս չես առնում մի անդամ, դնում գերեզման սիրական,  
Մորթում ես ինձի անդանակ, թողնում անկենդան  
սիրական:

Դու լուսին ու արեգակ ես՝ ողջ աշխարհին լոյս ես տալիս,  
Սէրդ սրտումս կաթել է, ինձ ամեն օր յոյս ես տալիս.  
Երբեմն վարդ ու մանուշակ, ինձ անթառամ բոյս ես  
տալիս,  
Երբեմն էլ խաբ-խաբելով, ինձնից խաբս ու խոյս ես  
տալիս.

Վերջապէս չես տալիս ինձ մէկ՝ հաստատ պատասխան  
սիրական,  
Մորթում ես ինձի անդանակ, թողնում անկենդան  
սիրական:

Դու թէ չլինես ես կը մեռնեմ, հաստատ պահապանս  
դու ես,  
Թէ չլինէիր, շատ կապրէի. հաստատ հոգեհանս դու ես,  
Բժիշկն ինձ հարկաւոր չէ, իմ գեզ ու գարմանս դու ես,  
Ա՛լս երբ կը լինի աչքս բանամ՝ տեսնեմ որ իմ տանս  
դու ես.

Քո վառ կրակով այրում ես՝ ինձի յաւիտեան սիրական,  
Մորթում ես ինձի անդանակ, թողնում անկենդան  
սիրական:

Սիրուն օրիորդների միջին, գեղեցկութեամբ դու մի հատ ես,  
Սնունդ ոսկի, ինքդ ոսկի, քեզ ով կասէ թէ աղքատ ես,  
Գեղեցկութեանդ համեմատ՝ եթէ իսօքիդ էլ հաստատ ես,  
Աղքաների աղօթքովը ամեն փորձանքից աղատ ես,  
Ղեռդս այս օտար երկրում չունիմ աղքական սիրական,  
Մորթում ես ինձի անդանակ, թողնում անկենդան  
սիրական:

Մ Ի Շ Տ Պ Ա Ր Տ Ե Ս.



Իշտ պարտ ես աղօթել դու քո Տիրոջդ,  
Որ պահէ քեզ ամեն փորձանքից աղատ.  
Թէ կուզես դուր գալ եղբօր ու քրոջդ,  
Պատուիր ծնողներիդ դու միշտ հարաղատ:

Միշտ քո ծնողայդ դու պատուել ես պարտ,  
Նոյս հնաղանդուիր, մի լինիր հողարտ.

Թէ կուզես լինել դու՝ Տիշտ կատարեալ մարդ,  
Բարի և լաւ մարդկանց եղիր հնազանդ:

Միշտ պարտ ես լաւ մարդկանց հնազանդ մնալ,  
Սիրել, պատուել նոցա՝ հարազատ մնալ,  
Թէ կուզես փորձանքից դու ազատ մնալ,  
Ազօթիր Տիրոջը՝ սրտով ջերմեռանդ:

Միշտ պարտ ես ջերմեռանդ Տիրոջը կանչել,  
Ազօթել, խնդրել նրան՝ և միշտ աղաչել.  
Թէ կուզես պտուղ տալ ծաղկել, կանչել,  
Ունեցիր խղճմտանք, սէր, նաև եռանդ:

Միշտ պարտ ես ունենալ դութ ու խղճմտանք,  
Լսել լաւ խրատաներ, պահել պատուիրանք.  
Թէ կուզես տեսնել լաւ օրեր, ուրախ կեանք,  
Շահիր սրտեր, տխուր, տրտում և հիւանդ:

Միշտ պարտ ես մխիթարել սրտերն տխուր,  
Զթողնել որբի և խեղճի վիզն ծուռ.  
Թէ կուզես ողորմի տանել, դու էլ զորմի տուր,  
Մի բերան էլ ինձ տաիր՝ ողորմի քեզ Դեանդ:

### ԿՈՌԻՆԿՆԵՐ.



Րամ-Երամ Երկնքովս թռչում էք,  
Շարուել էք կարգերով դասաւ կռունկներ.  
Մեղմ ու բարակ եղանակով Երգում էք,  
Չեր ձայնն ականջիս՝ հասաւ կռունկներ:

Կացէք, պատմեմ ձեզի իմ դարդ ու սարը,  
Գուցէ դուք հասցնէք իմ ցաւիս ճարը.

Չորանում է կենացս կանաչ ծառը,  
Վարդ ծաղիկս թառամեցաւ կռունկներ:

Կռնւնկը, օտար Երկրում հալուաւ ոսկորս,  
Գիշերուանից մութ ու սե անցաւ օրս.  
Կացէք, մի նամակ տամ տարէք իմ հօրս,  
Ասէք՝ պանդուխտ որդիդ տուաւ, կռունկներ:

Քոյրերս ինձ սպասելով մնացին,  
Ամեն օր, Եղբայր, ասելով մնացին.  
Ծնողներս արտասուելով մնացին,  
Մտածելով կեանքս մաշուաւ կռունկներ:

Կեանքիս թելը բարակել է մաշուելով,  
Լեարդ ու թռքերս այրուել է խաշուելով.  
Միրտս փթեց սե օրերս հաշուելով,  
Ժամանակս չլրացաւ կռունկներ:

Հայրենիքից զրկուած օտար մնացի,  
Ծնողացս կարօտով տկար մնացի.  
Հոգս ու ցաւով լի, ապիկար մնացի,  
Ասէք, որդիդ՝ այսպէս ասաւ կռունկներ:

Կարօտում եմ իմ Եղբայր Թագէսսին,  
Աչքերիցս արիւն-արցունք կհոսին.  
Շատ խնդրեցի, աղաչեցի սուրբ Կուսին,  
Բայց խնդիրքս շատ ուշացաւ կռունկներ:

Սե սրտիս պէս՝ ես էլ հագել եմ սեեր,  
Շնուտ տեղ հասէք, արադ շարժէք ձեր թեեր,  
Նստած կսպասեմ ձեզ՝ աչքս դէպի վեր,  
Ամեն կողմից ճամփէս կապուաւ կռունկներ:

Ունիք թեեր լայնատարած ու արձակ,  
Թուէք դէպի Աղդաշ ուրախ՝ համարձակ.

Այնտեղ է Խաչառուր<sup>1)</sup> Եղբայրս դերձակ,  
Ասէք՝ Եղբայրդ շատ լացաւ կոռոնկներ։  
  
 Կոռնկներ, կը սիրէք ձեր արդարութիւնը,  
Գնացէք պատմեցէք իմ դրութիւնը.  
 Անտանելի ցաւ է օտարութիւնը,  
Իմ ճակատիս այսպէս գրուաւ, կոռոնկներ։  
  
 Կոռնկներ, ձեզ տեսնելով սիրտու լցուեցաւ,  
Միջից հաղար մի տեսակ ցաւեր անցաւ.  
 Միայն ձեր երդերով միսիթարուեցաւ,  
Ուրախացաւ, քիչ բացուեցաւ կոռոնկներ։  
  
 Կոռնկներ, թռէք անցէք Շամախի Շիրվան,  
Ինձնից բարե տարէք ի գիւղն Սաղիան.  
 Խեղճ Ղեռդն եմ, աղդանունս Խաչվանեան,  
Ասէք ինքը մեղ հետ խօսաւ կոռոնկներ։



\* \* \*



Հասրհումս ես ամբարիշտ՝  
Եւ չար մարդու հետ բան չունեմ  
Եւ կուզեմ հեռու կենալ միշտ,  
Ինքն անհաշտ, արծաթապաշտ,  
Կոռարար մարդու հետ բան չունեմ։

Զեմ լինի կոռարար խարդախ,  
Խօսքերս կասեմ ես անվախ,  
Եւ կերդեմ զուարթ ուրախ,  
Շուտ-շուտ տիւրող, և շատ քիրող,  
Տիւմար մարդու հետ բան չունեմ։

1) Հօրեպօրս որդին է անբաժան ինչպէս հարազատ եղբայր։

Խօսքը լսող բայց խուլացող,  
Բանից վախեցող ծուլացող,  
Դեռ չանած շուտ թուլացող,  
Մարմնով ամբողջ, ողջ և առողջ,  
Թշուառ մարդու հետ բան չունեմ։  
  
 Իրան միշտ գիտուն համարող,  
Իւր ժամանակին անկարող,  
Լեզուովն շատ բան կատարող,  
Ինքնահաւան, ինքն անբան,  
Խաւար մարդու հետ բան չունեմ։  
  
 Ինքն գրող և կարդացող,  
Ամեն բան խօսող իմացող,  
Իղուր բղաւող, բարիացող, ~  
Տուող խրատ, ինքն պրատ,  
Շուար մարդու հետ բան չունեմ։  
  
 Հասակն անցրած կամ ձեր,  
Վատ-վատ ճանապարհների սէր,  
Թէ լինի իմ Եղբայր կամ հեր,  
Խրատ տուող, իրան անպատուող,  
Սիրահար մարդու հետ բան չունեմ։  
  
 Ունիմք մէկ Հայր անմահ անձին,  
Եւ Սուրբ Որդի Հօր՝ միածին,  
Ծառայ եմ Հոգւոյն բղխածին,  
Երեք անձինք, Աստուած մէկ ինք,  
Հաղար մարդու հետ բան չունեմ։  
  
 Ղեռդ բաւ է, հերիք մեկնես,  
Ոտդ պէտք է չափով մեկնես,  
Դու էլ տղէտներից մէկն ես,  
Շատ խօսող, և շատ բամբասող,  
Աղողար մարդու հետ բան չունեմ։



Լ Ա Բ Ի Պ Ո Ր Դ Ե Ա Կ .



սիր որդեակ քեզ մի կարճարօտ խրատ,  
Միայն մոտածիր դու՝ և լաւ հասկացիր.  
Թէ պահես, օրհնութիւն կընդունես վրադ,  
Այս խօսքերէն երբէք դու մի կասկածիր:

Երբ մեծացար մկամը քեզ ճանաչիլ,  
Պարտ ես Տէրից վախիլ մարդուց ամաչիլ.  
Թէ ուզում ես բռունիլ, ծաղկիլ, կանաչիլ,  
Լսիր խրատ, և սուրբ գրքեր կարդացիր:

Բռնիր ճանապարհի ճիշտը՝ ուղիղը,  
Անդ կը դանես բարի մարդկանց շաւիղը.  
Մաքումդ պահէնով Տիրոջ երկիւղը,  
Հաստատիր քայլերդ, էլ մի ուշացիր:

Երբ ընարեցիր ճանապարհի հաստատը,  
Այնժամ գիտեմ ընդունել ես խրատը.  
Էլ քեզ չի հարկաւոր ուրիշը, շատը,  
Միայն մի Տէր և ստեղծող իմացիր:

Սիրելիս, ես պարտ եմ այս էլ քեզ ասել,  
Որ քեզ պէտք չէ՝ վատ ընկերների լսել.  
Թէ կը սիրես նրանց հետ դործ սկսել,  
Իմանաս որ ուղիղ ճամբադ կորուցիր:

Ընկերդ թէ հարուստ կամ աղքատ լինի,  
Այնպէս արա, քեզի համեմատ լինի,  
Լաւ ծնողաց որդի, լաւ արմատ լինի,  
Մի նայիր, նրա հետ դու ընկերացիր:

Լաւ մարդկանց հետ դու միշտ նիստ ու կաց արա,  
Թէ լաց լինեն, դու էլ աչքդ թաց արա,

Երբ որ ուրախանան, սիրտդ բաց արա,  
Առաջուայ սուդ ու լաց շուտով մառացիր:

Ոչ ոքի մօտ խօսքդ մի երկարցնիլ,  
Աշխատիր խօսք լսել և ուշ դարձնիլ,  
Թէ մէկը քեզանից խօսք չի հարցնիլ,  
Զուր տեղը մի խօսիր, բերան մի բացիր:

Ասած խօսքս լաւ մտածիր, լաւ միտ առ,  
ուրիշների դլախն երբէք ցաւ մի դառ.  
Քո գլուխը ուրիշն գրաւ մի տար,  
Միշտ աչքաբաց եղիր և զգուշացիր:

Ղետոդ, բաւ է. հերիք է կարդաս խրատ,  
Դանակը գանակ է, մկրատը՝ մկրատ.  
Սնառակ որդին չի գառնալ անարատ,  
Լաւն էն է, լոիր, ու անձէն կացիր.

— ու թ ո ւ —

\* \*



Վ թագաւորաց թագաւոր, և Դու Տէրանց Տէր  
իմ Աստուած,  
Ստեղծող, Արտրիչ, արդար, Սուրբ և Եղյո պատկեր  
իմ Աստուած,  
Լոկը մեր անարժան ձայնին, ունիմք հառաչաներ  
իմ Աստուած,  
Մեր սիրտն անմիխթար մի թող՝ ուրախութիւն բեր  
իմ Աստուած,  
Փրկիչն մեզ կը քարոզէ հաւատ, յոյս և ոէր  
իմ Աստուած,  
Հաւատով յոյսով խնդրում ենք, սիրով մեզի ներիր  
Աստուած:

Արարածոց Արարիչը՝ մարկղանց ստեղծողը Դու ես,  
Երկիրն ստացդ տակն է՝ երկնքում կենողը Դու ես,  
Երկնքիցը ողջ արարած՝ աշխարհին նայողը Դու ես.  
Ճշմարիտ դատաստան անող՝ և արդար դատողը Դու ես,  
Կապեալին, հիւանդին խղճող, ցաւից աղատողը Դու ես,  
Խղճա ազատիր և մեղի, բաց մեր կապանքներ իմ Աստուած։  
  
Մենք Քո ձեռացդ դործն ենք, Դու երկինք ու երկիր  
Տէր ես,  
Անոկիղը ու անվերջ լոյս ես, բարձր երկնքիցն էլ վեր ես,  
Չինայեցիր մեղ Քո Որդիդ, Դու անքննին մարդասէր ես,  
Քո բազմառատ դժուժեամբը՝ խնդրում ենք մեղքներս  
ներես,  
Հայր, Որդի և Սուրբ Հոգի, նաև հաւատ, յոյս և սէր ես,  
Քո ստեղծածիդ միշտ սիրող՝ ողորմացող լեր իմ Աստուած։  
  
Ամեն շնչառոր արարածք Քեղանով կառավարւում են,  
Շատ տիսուր և կոտր սրտեր՝ Քեղանով միխթարւում են,  
Ծով, ցամաք, լուսին, արեգակ, աստղերն քեզ  
խոնարհվում են,  
Քո անունից սարսափելով չարերն հրաժարվում են,  
Ամեն բան իր ժամանակին Քո հրամանով կատարվում են,  
Պատճառն Դու ես ամէն բան՝ Ստեղծող և Տէր իմ Աստուած։  
  
Ո՞վ Հայր, Որդի, և Սուրբ Հոգի, ամենասուրբ  
Երրորդութիւն,  
Մի Տէրութիւն և մի Աստուած, Երեք անձնիք և մի  
ընութիւն,  
Մի մոռանար կորուսաներ, մի ջնջիր ոհի մեր Հայ անուն,  
Մի թողիր զուր տեղը թափուի Քո արարածոց անմեղ  
արիւն,  
Դեօնդո՞ւ ես անարժան եմ, թէ խնդրեմ էլ մինչ իրիկուն,  
Միջնորդեն վասն մեր՝ առ Քեզ, Քո ամեն Սրբեր  
իմ Աստուած։

Թ. Է. Զ. Ն. Ի. Ա.



Վ մարդ արի սիրիր դու ճշմարտութիւն,  
Եւ քեզի տուր միշտ ուղիղ ճանապարհի.  
Ճշմարիտ մարդն ունի միշտ մարդկութիւն,  
Եւ հաստատ խօսք՝ ճիշտ ու քաղաքավարի։

Մի լինիր սուտ խաբող, մի լինիր խարդախ,  
Ճշմարիտ կաց, դու յաղթող ես և անվախ.  
Միշտ գործով աջողակ, և սրտով ուրախ,  
Կը լինես շարունակ ամենայն տարի։

Այն մարդն որ ճշմարտութեան մէր ունի,  
Նա իւր գլուխն հզօր, յաղթող Տէր ունի.  
Ճշմարիտ գործոց մէջ, Տիկոն՝ ձեռ ունի,  
Պիտի յաղթի նա միշտ հարիւր հազարի։

Ասած խօսքս եղբայր, թէ լաւ մտածես,  
Եւ կատարես՝ ճշմարտութեան մէջ մտած ես.  
Մեծ ու փոքրով ձեր ուղածն կտայ ձեզ,  
Նա, որ գթած է և ամենաբարի։

Ղեոնդ, ճշմարտութիւնը ամենին յաղթող է,  
Ճշմարտի մօտ ստախօսն կը դողէ.  
Ինչ մարդ ստախօս է և մարդ խաբող է,  
Նա իւր ձեռքով իւր ճրագն կը մարի։



\*\*



այս կապէք ինքն միայն մէկ, անուններն հաղար  
մէկին,  
թէ միշտ նրան ապաւինէք, նա չի թողալ լաւար մէկին.  
Այս աշխարհը ծաղկունքով ու պտուղներով զարդարողին,  
թէ յուսով հաւատով ինդրէք, չի թողալ և անբար  
մէկին:

Եղբարք, սուրբ գրքեր կարդացէք, բարի լրատներ  
սովորէք,  
Լաւ բարի սերմեր ցանեցէք, տգէտներին լուսաւորէք.  
Ամեն օր զԱստուած յիշելով օրհնեցէք և փառաւորէք,  
թէ սուրբ պատապաններին՝ մի նեղէք համբերով եղէք,  
մէկին:

Իրար հետ սիրով վարուեցէք, սխալներդ ներող եղէք,  
Աղքատներին խղճով նայող, որբերին միշտ սիրող եղէք,  
Չքաւոր պարտապաններին՝ մի նեղէք համբերով եղէք,  
Խղճատանքով սիրտ ունեցէք, մի ձեւանաք դուք քար  
մէկին:

Թէ դադար տաք կոխներին, իրար հետ չկենաք խոռով,  
Քաղցրութեամբ գործ վարելով, իրար հետ միշտ մնաք  
սիրով,  
Ճանաչէք օրէնք, ճանապարհ, երբէք չպարծենաք զօրով,  
Չեր ցաւին գեղ կտայ Աստուած, նա չի թողալ անճար  
մէկին:

Որդին հօրը հայհոյում է, եղբայր եղբօր վսասում է,  
Աշխարհս մեղքերով լցվում, բարիքներն պակասում է.  
Հայրն կուղէ ապաշխարենք, համբերելով սպասում է,  
Նայում է իւր մարդկանց վերայ, չի դտնում և արդար  
մէկին:

Դւոնդ, քննենք Տիրոջ գործը, շատ քաղցր է նրա սէրը,  
իւր մեծ ողորմութեան համար, մեզ շատ սիրեց փառաց  
Տէրը.

Մեզ ակարներիս փրկելու և չնջելու մեր մեղքերը,  
Դրկեց մարմնացաւ, մարդացաւ, զոհեց նա մեզ համար  
Մէկին:



ՄԻ ԽՕՍՔ Ս.ՍԵՄ.

Ի խօսք ասեմ քեզի շիտակ իմացիր,  
Եւ այս խօսքը գու միշտ պահիր քո մոքում,  
Ճշմարիտ, պարզ, մաքուր, խտակ իմացիր,  
Պահիր պատուիրանքը, և կաց օրէնքում:

Այն մարդն որ օրէնքի մէջ չի ծնվում,  
Նրա խօսքն մարդկանց մէջ չի ընդունվում,  
Պատճառն իւր կերանքում նա չի դտնվում,  
Տաճկի ուղարկեկում<sup>1)</sup>) կամ հայի խնկում:

Նա որ չար ծնունդ է առել մօրիցը,  
Ալօրինի ծնուել իւր մօր փորիցը,  
Շնորհ չի ընդունիլ նա Տէր-Հօրիցը,  
Երբ որ մկրտում է, սուրբ գրօշմով կնքում:

Նա քանի մեծանայ՝ պէտք է վատանայ,  
Չար գործերն, մեղքն, պէտք է շատանայ,  
Պատճառն՝ արմատն է չար և սատանայ,  
Չի սիրիլ նա մի բարի գործ իւր կեանքում:

Նրա սրտումը չի լինիլ խղճատանք,  
Երեսումը չի ունենալ պատկառանք.

1) Աւղարլիկ խոտ է, որ տաճիկները գործ են ածում խնկի տեղ:

Զի խոնարհուիլ սրբի, չի հաւատալ վանիք,  
Զի գահուիլ եկեղեցում, և վանիքում:

Երբ մի մարդում լինի չար սերմ, չար արմատ,  
Կապականէ մարմինն, չի մնալ մի մատ.  
Ամեն մարդ իւր չար գործերի համեմատ,  
Միշտ տանջվում է, չարչարվում է և տնբում:

Ով ինչ սերմեր կը սերմէ կամ կը շաղէ,  
Նոյն պատուզն կը հնձէ և կը քաղէ.  
Քանի ժամանակն չէ անցել վաղ է,  
Պէտք է կենալ միշտ արդար աշխատանքում:

Այս բանը ոչ ջրից և ոչ հողից է,  
Ոչ ազգատութիւնից և ոչ փողից է.  
Այլ անկարդ անկանոն, վատ ծնողից է,  
Որ չի կենում Տիրոջ սուրբ պատուիրանքում:

Ենողը պէտք է իրան միշտ մաքուր պահի,  
Ուրիշի գէմ իրա աչքը կոյր պահի.  
Տղալ պահի, աղջիկ պահի, քոյր պահի,  
Եւ մաքուր կաթ ունենայ իւր ստինքում:

Չարի սերմանածը չարն էլ կը հնձէ,  
Կը թամիք կնսուէ, դլուխն կը սանձէ,  
Կը տանէ կրակում կայրէ կաղանձէ,  
Իւր մեղքերն դնելով իւր շլնքում:

Դեռդ, բաւ է, այս բաներին կայ քննող,  
Ապրանքին համեմատ՝ կայ և դին դնող.  
Այսուղ ոչ սուրբ հայր կայ, ոչ մաքուր ծնող,  
Մի Սուրբ Հայր կայ, որ կենում է Երկնքում:

ՍՈՒԾԿ ԵՄ ՎԱՐԴԻՍ ՄԱՆ ԿՈՒԳԱՄ.



այրենիքս հողս ձգած,  
Սոխակ եմ վարդիս ման կուգամ.  
Յուզուած, հողնած և վաստըկած,  
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,  
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ:

Կոտըուաւ իմ վառ կանթեզս,  
Այնժամ երբ թողի իմ տեզս.  
Արդեօք երբ կդանեմ գեզս,  
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,  
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ:

Տարեկան հինգ նաւակատիկ,  
Անցուցել եմ եօթը զատիկ.  
Թողած եզրօրս մի հատիկ,  
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,  
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ:

Շիրվանումն է Սաղիան զեզս,  
Սաղիանումն է տուն ու տեզս,  
Թողած այնաեղ ազգ ու ցեզս,  
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,  
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ:

Սիրտս տխուր, միաքս մոլոր,  
Աչքերիս արտասուք կոլոր,  
Ճամբայ դառած աշխարհ բոլոր,  
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,  
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ:

Հոգս ու ցաւից կապել եմ բեռ,  
Գնում եմ տեղ՝ չեմ հասել դեռ,  
Դարսն ամառ, աշուն ձմեռ,  
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,  
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Միրսո հագած ունի սե սուք,  
Մէջն լի արիւն արտասուք,  
Չեմ դգում ոչ ցուրտ ու ոչ բուք,  
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,  
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Վարդս տեսել հարցրել եմ,  
Աչքիս առջև կորցրել եմ,  
Նրա դարդն էլ վերցրել եմ,  
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,  
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Գնաց, ինձի լալով թողեց,  
Խեղճ գլխիս վայ տալով թողեց,  
Հետեիցը ման դալով թողեց,  
Սոխակ եմ վարդիս ման կուգամ։  
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Միրսո սեցուց ինչպէս թանաք,  
Մորթեց սպանեց անդանակ,  
Ոմեն օր ամեն ժամանակ  
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,  
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Ինձ թողեց անբաղդ անսատար,  
Ուխտ ու պայմանս անկատար,  
Փնտրում եմ ես՝ միշտ, անդադար,  
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,  
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Օրի հետ ես էլ կը մթնեմ,  
Գլուխս չոր քարին կդնեմ,  
Ա՛խ երբ պիտի վարդս գտնեմ,  
Սոխակ իմ վարդիս ման կուգամ,  
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Տէր իմ, խղճա արտ աղատ,  
Գտնեմ իմ վարդն հարազատ,  
Օտար երկում խեղճ և աղքատ,  
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,  
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Թանի չէ թառամել խոտը,  
Գտնեմ, գնամ վարդիս մօտը.  
Մէկ էլ առնեմ անուշ հոտը,  
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,  
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Մինչև ծաղիկս չը գտնեմ,  
Ուխտել եմ աշխարհ չը մտնեմ.  
Ունեցածս ողջ կը վատնեմ,  
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,  
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Եմ վարդն ինձ շինեց առակ,  
Դարդ տուեց երկար ու բարակ,  
Դարձել եմ որդի անառակ,  
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,  
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Հայրենիք, իմ աչքի լոյսը,  
Օրհնուի քո հողն ու բոյսը,  
Կը դամ, չեմ կտրել իմ յոյսը,  
Սոխակ եմ վարդիս ման կուգամ։  
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Դեռնդս գարդեր ունիմ շատ,  
Սիրու լի մէկը միւսից վատ.  
Կորուցել եմ վարդս հաստատ,  
Սոխակ եմ վարդիս ման կուղամ,  
Դարման՝ իմ գարդիս ման կուղամ:



ՍԻՐՈՒ ԿՈՅԱ.



Երուն կոյս, այն օրից՝ ինչ տեսել եմ քեզ,  
Սիրել եմ, սիրում եմ և պիտի սիրեմ.  
Քո մասին զրկանքներ՝ ինչ ասել եմ քեզ,  
Կրել եմ, կրում եմ և պիտի կրեմ:

Ինչքնն ուրախ անցաւ ինձ համար այն օր,  
Երբ հինն հանելով՝ հագել էիր նոր.  
Մի հոտով ծաղկէ փունջ քեզ իրը չհորհ  
Բերել եմ, բերում եմ և պիտի բերեմ:

Ինքդ հայ օրիորդ՝ անունդ Սանդուխտ,  
Չմոռնաս մեր արած այն պայման և ուխտ.  
Իմ ձեռքով քեզ՝ այն օրուանից սիրոյ թուղթ  
Գրել եմ, գրում եմ, և պիտի գրեմ:

Դու ինձի ձգել ես հոգս ու ցաւի մէջ,  
Հուրդ անհանդչելի՝ կրակդ է անշէջ.  
Քո տուած ցաւերին, դարդերին անվերջ  
Լուել եմ, լուսւմ եմ և պիտի լուեմ:

Խնդրեմ չաւելացնես ցաւ՝ կրակս,  
Ով իմ աղաւնեակս և իմ տատրակս.  
Քո սիրոյ կրակով սիրոս՝ ու ճրագս  
Վառել եմ, վառում եմ և պիտի վառեմ:

Խնդրեմ ինձ չսպանես չը անես մաս-մաս,  
Դարդս որ տուել ես, դարմանն էլ տաս.  
Դօշիդ լալ ու գոհար՝ ջաւահիր ալմաս,  
Շարել եմ, շարում եմ և պիտի շարեմ:

Ով իմ սիրուն քաղցրախօս երգիչս,  
Ցաւիտեան քեզ հաստատ պահէ Փրկիչս.  
Քեզ գովասանք գրելու իմ գոհիչս՝  
Սրել եմ, սրում եմ և պիտի սրեմ:

Քո սիրով վառուել՝ ես առա յանձն,  
Չեմ սիրում հագուստն, փողն ու գանձն.  
Դեռնդս քո սիրոյ կրակով իմ անձն՝  
Էրել եմ, էրում եմ, և պիտի էրեմ:

ԱՆՈՒԾ ՍԻՐԱԿԱՆ.



Հսաւհումս չի ճարուի մի քեզ նման գովական՝  
Անուշ սիրական,  
Ողջ հոտաւէտ ծաղիներից գու ես ինձի դուրեկան,  
Անուշ սիրական,  
Քո սէրն ինձ չարչարում է գիշեր ցերել միշտ՝  
Ունիմ ցաւ ու վիշտ,  
Ամեն օր ինձ հալածում է՝ դառել եմ թափառական,  
Անուշ սիրական:  
Դու հոտով վարդ, մանուշակ, նունուփար րէյհան ես,  
Հերիք իմ հոգիս հանես,  
Սիրուն անթառամ ծաղիկ ես՝ յաւիտեան ինձ պէտքական,  
Անուշ սիրական:  
Սիրուն, սպիտակ պատկերդ փայլում է ինչպէս լուսնեակ,  
Դու ես արե արուսեակ.

Ինքդ քնքուշ, ձայնդ անուշ, լեզուդ քաղցր Հայկական,  
Անուշ սիրական։  
Ունքեր ունես կամարաձե, աչքերդ սև սաթի պէս,  
Թուշտ արինակաթի պէս.  
Դունշանակուած ես ինձ համար սնուր, սահման պապական,  
Անուշ սիրական։—  
Քաղցր շաքար երեսիդ մօտ՝ սպիտակ ձինն սև է,  
Անուշ սիրական։  
Կը սիրէ քեզ աշխարհական՝ նաև հոգեռարական,  
Անուշ սիրական։  
Չի գտնուիլ քո հատը՝ Լօնդոնում և Փարէզում,  
Թէհրանում և Թաւրէզում.  
Վարդ բաց արած վարդի ծառ եռ՝ տասն և հինգ տարեկան,  
Անուշ սիրական։—  
Այրում ես դու չորացնում կենացս կանաչ ծառը,  
Մորթում ես ինչպէս դառը.  
Դարձրել ես ինձ քո գերիդ՝ միշտ և յաւիտենական,  
Անուշ սիրական։—  
Արի առաջիս ման արի, խօսիր, խաղացիր, պարիր,  
Իմ սիրաս միսիթարիր.  
Մի քայլդ արժէ ինձ համար հարիւր հաղար դահեկան,  
Անուշ սիրական։—  
Չէ որ ես էլ քեզ պէս հայ եմ և քրիստոնեա,  
Խղճա ինձ դոնեա.  
Սուրբ աւաղանում մկրտուած և սուրբ լուսաւորչական,  
Անուշ սիրական։  
Մինչև երբ դու չարչարես ինձ և թողնես անձար,  
Միշտ ու մուղարար.  
Դու գիտես որ՝ ես օտար եմ, անտէր ու անտիրական,  
Անուշ սիրական։  
Ողջ աշխարհում չեմ տեսել՝ քեզ պէս աննման խանում,  
Ինչի ես հոգիս հանում.  
Կամ հոգիս առ աղատվեմ, կամ մի խօսք տուր վերջնական,  
Անուշ սիրական։

Քո ձեռքովդ սպանիր ինձ և գերեզման տար,  
Վրէս դիր մի քար.  
Ել չեն յիշում լսեղճ Դեսնդին, ոչ եղբայր, ոչ ազգական,  
Անուշ սիրական։

— ՀՅ ՀՅ ՀՅ —

### ՏԵՏՐԱԿԱՆ



Ետրակս, երբեմն լուռ և անխօս ես,  
Երբեմն էլ անչափ տիրած ես տետրակս.  
Երբեմն կերպես քաղցր կը խօսես,  
Երբեմն էլ տիսուր կը լացես տետրակս.

Դու պարտէշ ես՝ լի պաղատու ծառերով,  
Ճիւզերդ լի քաղցրանուշ բարերով,  
Գոյն-դգոյն հոտաւետ՝ ծաղկանց շարերով՝  
Հիւսած, կազմած, փունջ կապած ես տետրակս

Ծառաստան ես, մի ծաղկազարդ պարտէզ ես,  
Փնջեր կապած, դարսած, մի վարդի գեղ ես.  
Կուզեմ որ գրչիս տակ՝ պահեմ միշտ քեզ ես,  
Առանց գրչի գու մեռած ես տետրակս

Դու մառան ես, մէջդ լիքը անուշ միրդ,  
Միջիդ ունես կարդ ու կանոն, ձեւ ու ձիրք,  
Կուզեմ տպուես շուտով՝ դառնաս մի լաւ գիրք,  
Եւ գնաս խօսքս տարածես տետրակս

Թէւ խօսքերդ քիչ՝ ինքդ բարակ ես,  
Տողերդ ծուռ ու մուռ, շատ հասարակ ես,  
Բայց ինձ համար՝ դու մելլը ու կարադ ես,  
Չեռքովս կազմած, կարած ես տետրակս


Զարդարուած ես դու գոյն-զգոյն զարդերով,  
 Մանուշակով, բէյհանով վարդերով.  
 Չես թողնիլ իմ սիրտս լիքը դարդերով,  
 Երբ որ տեսնեմ դու տպուած ես տետրակու:  
 Տետրակու, ես քեզի կը առաջարկեմ,  
 Վասնորոյ կը պատուեմ և շատ կը յարդեմ,  
 Չեմ ուշացնիլ քեզի շուտով կուզարկեմ,  
 Միայն աչքերս չը թացես տետրակու:  
 Այն էլ քեզի ասեմ՝ թէ լաւ խմանաս,  
 Նրա համար ես քեզի կուզարկեմ դնաս,  
 Որ մարդկանց մէջ՝ դու մի անուն ստանաս,  
 Ո՛չ լսեմ՝ որ՝ դու կորած ես տետրակու:  
 Ով մօտովդ անցնի, նրան ձայն կը տաս,  
 Եթէ խօսք հարցնի, պատասխան կը տաս.  
 Չինայես, խօսքերդ էժան կը տաս,  
 Թերթերդ մէկ-մէկ կը բացես տետրակու:  
 Թէ իմ բութ գրիչս մի լու կը սրեմ,  
 Միջիդ տեսակ-տեսակ բաներ կը գրեմ.  
 Թէ խմանաս՝ ես քեզի շատ կը սիրեմ,  
 Պատճառն դու՝ իմ՝ դրած ես տետրակու:  
 Տետրակու, դու փոքր ես, և գեռ նորոհաս,  
 Դեռ շատ բաներ ունես քեզանում պակաս.  
 Եթէ դնաս ման դաս և ուրախ յետ դաս,  
 Միւս եղբօրդ էլ դուած ես տետրակու:  
 Հազար ինը հարիւրին ձայնդ լսեցի,  
 Կանչեցի քեզ գտայ, ձայնով ասեցի,  
 Մայիս ամսին քեզի նոր սկսեցի,  
 Երեք ամսեայ հնարած ես տետրակու:  
 Իրար համեմատ դրուած է բառերդ,  
 Հասունացած, համովուած է բարերդ,  
 Գևոնդի ձեռքով դրուած է տառերդ,  
 Չեռքովս մէկ-մէկ շարած ես տետրակու

ՈՒՎ ՄԱՐԴ.



Վ մարդ, դու քո մեղքով քո ծանր ըեռով,  
 Պիտի ընկնես զրկանքին մասի մէջ.  
 Թէ խոնարհուես Տէրին իրա Սրբերով,  
 Դու երկար չես մնալ պատուհասի մէջ:  
 Պիտի դիշեր ցերեկ դու ապաշխարես,  
 Սրբոց վարքն սիրես և սուրբ կեանք վարես,  
 Անձդ տանջես և հողին հաւասարես,  
 Որ գտնուիս հաղորդի և մասի մէջ:  
 Թէ սիրտդ սուրբ պահես և չլինես ագահ,  
 Ամենեին անձիդ չընդունես շահ,  
 Յաւիտեան հոգւովդ՝ դու չես տեսնիլ մահ,  
 Որ գտնուիս ժամ, աղօթքի, պասի մէջ.  
 Պէտք է հոգւով սրտով ողորմած լինես,  
 Նեղեալ, կապեալ տեսնելոյն պէս՝ լաց լինես,  
 Չեռքով, սրտով, մտքով, աչքաբաց լինես,  
 Որ գտնուիս առաքելոց դասի մէջ:  
 Ամենայն ժամ պիտի լինի քո ջանքը,  
 Սիրել Աստուած, և պահել պատուիրանքը.  
 Կը փայլի միշտ պայծառ քո հոգւոյ կեանքը,  
 Որ գտնուիս Տիրոջ տուած Տասի մէջ:  
 Անմահական ջրով պէտք է լողանաս,  
 Սիրտդ հանես՝ մէջն մաքուր լուանաս.  
 Ոչ խաբես, ոչ հարբես, և ոչ գողանաս,  
 Որ գտնուիս սուրբ գրեանքի դասի մէջ:  
 Ղեռնդ, սուրբ բաժակն ճիշտ խաղողի կաթ պիտի,  
 Աղդար արիւն, քաղցր մեղր ու կաթ պիտի.  
 Անխառն, անճառ, սուրբ և անարատ պիտի,  
 Որ գտնուի սրբութեան կարասի մէջ:

ԱՌ Խ Կ Բ Ք Ա Շ Ե Մ



Ես կը քաշեմ կը հառաչեմ,  
Մէկ ես եմ մէկ անկողին,  
Ումնից խնդրեմ ում աղաչեմ,  
Պիտի զոհուեմ ու հողին:

Նեղութիւն, վիշտ ու տառապանք,  
Պատկերիս մէջ նկարուած,  
Տալիս է սրտիս հառաչանք,  
Սրտիս՝ կրակով վառուած:

Ո՞վ ցաւ անդութ, ով քարասիրտ,  
Քո չար խայթոց թունալից,  
Տուեց սրտիս արիւն՝ արցունք,  
Աչքս լաց արտասուելից:

Ո՞վ իմ եղբայր դու հարազատ,  
Մի մոռանար աղ ու հաց,  
Հասիր արա ցաւից աղատ,  
Սրբիր իմ աչքերն թաց:

Ո՞հ դու էլ ես քրիստոնեայ  
Քրիստոսի օրինակ,  
Հանս, բժշկիր վէրքս դոնեայ՝  
Թո՞ղ մի բարի յիշատակ:

Թէ խղճաս ինձ և աղատես՝  
Այս անդութ ցաւի ձեռից,  
Միշտ երկար կեանք կմաղթեմ քեղ՝  
Անմահ երկնային Տէրից:

ԱՌԻ, օրս մութ ու խաւար է,  
Զկայ մի լոյս մի ճրագ,  
Հիւանդ սրտիս մէջ կը վառէ  
Անհանդչելի մի կրակ:

Նեղ օրեր ինձ պաշարեցին  
Օտար երկրում ընդարձակ,  
Չեմ կարող հասնել հայրենիք,  
Այնտեղ քայլել համարձակ:

Իմ ուժերս թուլացել են.  
Արի, հասիր օդնութեան,  
Հասիր օդնել և աղատել,  
Լինել պատճառ փրկութեան:

Ո՞հ իմ մահս շատ հեռու չէ,  
Դլխիս վրէն կանդնած է.  
Սարսափելի դէնքով զինուած,  
Թւերն կը տարածէ:

Ղեղնդս՝ օտար, պառկած եմ,  
Մի խրճիթում հասարակ,  
Մեծ նեղութեամբ պաշարուած եմ,  
Փութա Փրկիչ, հաս արագ:

\* \*



Ա խնդրել եմ մի բան իմ ստեղծովից,  
Ստեղծովս ողորմած և լսող է.  
Իմ աչքն միշտ կուշտ է սոկիից, փողից,  
Իմ խնդիրքն ոչ սոկի է ոչ փող է:

Ոսկի, փող և դանձ է, դանձապահ ունի,  
Ունեցողն՝ մինչ յաւիտեան շահ ունի,  
Նա ոչ կորուստ ունի և ոչ մահ ունի,  
Յաւիտենից յաւիտեան՝ միշտ մնացող է:

Միշտ ողորմած և բարի է իմ Տէրը,  
Չի պակսիլ նրանից իմ յոյս ու սէրը.  
Նա ինձ շատ կը սիրէ քան թէ իմ հերը,  
Պատճառն միշտ՝ նա իմ հովիս հասնող է:

Ով ամեն օր օրհնէ նորա անունը,  
Նա յաւիտեան կը հաստատէ իւր առւնը.  
Տէրն ամենագէտ և իմաստունը,  
Ողջ սրտերի քննող, արդար դատող է:

Երբ որ աւելանայ իմ ցաւն ու վէրքը,  
Կը հեռանան ինձանից՝ իմ սերտ ընկերքը.  
Բարձրեալն մեկնելով իւր զօրեղ ձեռքը,  
Ամեն կողմից իմ գործո կը յաջողէ:

Ով որ իրա յոյը չկտրէ վերից,  
Որդւոյն մարդոյ Յիսուսի սուրբ պատկերից,  
Խնդրածը կտուանայ այն հզօր Տէրից,  
Որ երկինք և երկրի մէկ Ստեղծող է:

Ինչքան մնայ մարդն այս փուշ կեանքի մէջ,  
Այնքան կընկնի նա ցաւ ու տանջանքի մէջ.  
Վերջն էլ կը մանէ հող ու հանքի մէջ,  
Սկզբիցն հող էր, վերջն էլ հող է:

Դեռնդ, հան քո սրտից չարն ու նախանձը,  
Յանձնիր Տէրին քո բոլոր կեանքն ու անձը.  
Չի իմայիլ քեզանից քո ինդած դանձը,  
Նա՝ որ ողորմած և ամենակարող է:



կաւ ուրախ մայիս, և բացուեց նոր վարդ,  
Երդիր, մի լոիր դու՝ իմ սիրուն սոխակ.  
Զարթեց ողջ բնութիւն և ինդաց նոր՝ մարդ,  
Երդիր, մի լոիր դու՝ իմ սիրուն սոխակ,  
Պարտէզների երդիչ, դու սիրուն թռչնակ:

Ով սիրահար սոխակ պարտիզի դարդը,  
Ահա բացուել է քո՝ սիրական վարդը.

Սիրէք սիրուեք, վարատելով իմ դարդը,  
Երդիր մի լոիր դու՝ իմ սիրուն սոխակ,  
Պարտէզների երդիչ, դու սիրուն թռչնակ:

Վարդը իւր կարմիր երեսն բացել է,  
Անուշ հստը պարտիզում տարածել է.

Քո գալովդ սիրոս ուրախացել է,  
Երդիր մի լոիր դու՝ իմ սիրուն սոխակ,  
Պարտէզների երդիչ դու սիրուն թռչնակ:

Երդէ, պատմիր դու քո գլխով անցածը,  
Քո ձայնով թող զարթնի թմրած՝ քնածը,  
Նոր սրբելով քո աշերի հին լացը,  
Երդիր մի լոիր դու՝ իմ սիրուն սոխակ,  
Պարտէզների երդիչ, դու սիրուն թռչնակ:

Քաղցր ձայնովդ ուրախացրու ամենին,  
Փառաւորիր վարդը՝ նաև վարդենին,

Թող լսելու դուրս դան քո անուշ ձէնին,  
Երդիր մի լոիր դու՝ իմ սիրուն սոխակ,

Պարտէզների երդիչ, դու սիրուն թռչնակ:

Երդիր, նախ ամեն մարդ՝ անէ իւր փորձը,  
Նոր սկսէ շարունակէ իւր դորձը.

Սիրէ, պահէ, պաշտպանէ իւր եղբօրցը,  
Երդիր մի լոիր դու՝ իմ սիրուն սոխակ,  
Պարտէզների երդիչ, դու սիրուն թռչնակ:

Մինչ դալդ շատ թռչունք, ագռաւն ու Բուն,  
Պարտէղումք հաստատեցին իրանց բուն,  
Պարտիզպանը քնած՝ մտած է խոր քուն,  
Երգիր մի լոիր դու՝ իմ սիրուն սոխակ,  
Պարտէղների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Երգիր, բարձրացրու քո դայլայլակը,  
Թող ամաչէ ու հեռանա թութակը.  
Զայնը կտրէ, լոէ չալ կաչաղակը,  
Երգիր մի լոիր դու՝ իմ սիրուն սոխակ,  
Պարտէղների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Դիշերդ ցերեկ արիր, մնացիր անքուն,  
Պարտէղից զրկուելով մնացիր անքուն.  
Ինձ նման առանց տուն՝ մնացիր և դուն,  
Երգիր մի լոիր դու՝ իմ սիրուն սոխակ,  
Պարտէղների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Սոխակ, եթէ նոցա կապես քո յոյսը,  
Կերկարի դիշերդ՝ չի բացուիլ լոյսը.  
Նոցա մօտ կանչէ վարդ. քո սիրած բոյսը,  
Երգիր մի լոիր դու՝ իմ սիրուն սոխակ,  
Պարտէղների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Դու ինքդ էլ տեսնում ես քո աչքովը,  
Թռչուններին՝ նստած վարդիդ աջ քովը.  
Լաւ է քեզ մահանալ նրանց ձեռքովը,  
Երգիր մի լոիր դու՝ իմ սիրուն սոխակ,  
Պարտէղների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Սոխակ երգէ, անբաղդ կ'մնայ մունջը,  
Ագռաւը կը ջարդէ քո վարդի փունջը.  
Երգելով անցրու սրտիդ մրմունջը,  
Երգիր մի լոիր դու՝ իմ սիրուն սոխակ,  
Պարտէղների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Թռչունքն տեսնելով՝ քեզ լուռ ու խղճուկ,  
Զարդում են վարդդ, քեզ՝ կարծելով ճնճղուկ.  
Ինչու մնացել ես այդպէս խեղճ՝ ստրուկ,  
Երգիր մի լոիր դու՝ իմ սիրուն սոխակ,  
Պարտէղների մէջի, դու սիրուն թռչնակ։

Սոխակ, թէ լոես էլ քեզ տոեմ շիտակ,  
Բաղէի ճանկերով կլինես նահատակ.  
Զոհուիր վարդ կանչելով, թող մի յիշատակ,  
Երգիր մի լոիր դու՝ իմ սիրուն սոխակ,  
Պարտէղների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Քեղանից յետոյ թող իրանք էլ իմանան,  
Որ դու երգիչ էիր, իսկ իրանք անբան.  
Գոնեա խղճան, ձագուկներիդ մի օր տան,  
Երգիր մի լոիր դու՝ իմ սիրուն սոխակ,  
Պարտէղների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Նաև ասեն՝ կեցցես սոխակ պատուական,  
Զմոռացաւ իրա երգն պատպական.  
Երգով զոհուեց իրա վարդին սիրական,  
Երգիր, մի լոիր դու՝ իմ սիրուն սոխակ,  
Պարտէղների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Ա՛խ նա վարդին նայեց, իւր վիզն ծռաւ,  
Բաղէին տեսնելով՝ մունջ կացաւ լռաւ.  
Վերջն հառաչելով՝ ախ քաշեց թռաւ,  
Ղերնդ, չերգեց, թռաւ իմ սիրուն սոխակ,  
Ա՛խ ափսոս որ՝ թռաւ իմ սիրուն սոխակ։

ԱՆՆՄԱՆ ԽԱՆՈՒՄ.



Կ հաստատ հոգեհան կամ հոգի առնող՝  
Դու դեղեցիկ, սիրուն, աննման խանում.  
Առաջուց խօսք տուող վերջում յետ դառնող,  
Զկայ աշխարհիս մէջ քեզ նման խանում։

Հագնիում ես, զարդարվում ես, զուքվում ես,  
Դուրս ես դալիս միանդամայն չքվում ես.  
Ենձ տեսնելում՝ տշաքվում ես փրվում ես,  
Ինքդ քեզ կարծում ես՝ մի մեծ բան խանում։

Երբ ինձ պատահում ես չես տալիս բարով,  
Կարօս չես քաշիլ՝ թէ մնաս տարով.  
Քեզ վերայ գանձ դրի հարիւր, հազարով,  
Ով հաստատ մարդասպան՝ հոգեհան խանում։

Դու ինձ հետ վարուեցիր՝ միշտ դառն, անդութ,  
Ճշմարիտ ձևացար, բայց դուրս եկար սուտ.  
Տէրն զրկէ քեզ մահ, ժանտախտ և կարիւտ,  
Սպանէ քեզ դնեմ՝ դերեզման խանում։

Ամեն օր քո ձեռից ես կը կանչեմ՝ դատ,  
Աշխարհիս դարդերից ոչ լինես ազատ.  
Տունդ դլսիդ քանդուի, և լինի բարբատ,  
Մնաս անդերեզման՝ անշան խանում։

Խեղճ Դեսնդին արիր քեզնով ապական,  
Սև լինի քո օրդ, և քո ապադան.  
Հոգւով և մաշմանով մնաս պարտական,  
Դու սեերես դնաս՝ դատաստան խանում։



ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ



Ե ս սիրում եմ այնպէս մարդուն, որ իւր խօսքին  
միշտ հաստատ է,  
Ես չեմ սիրում այնպէս մարդուն, որ խաբեբայ է՝ միշտ  
վատ է.

Իրա խօսքին հաստատ մարդը՝ կը վայելէ շտա բարիբներ,  
Խաբեբայ, սուտ խօսող մարդը՝ վատ է, և խելքից աղքատ է։

Ես սիրում եմ այնպէս մարդուն, որ խօսք կտայ՝ էլ չի  
փոխիլ,

Այնպէս մարդն բարի կլինի, չար ճանապարհ ոտ չի կոխիլ.  
Ես սիրում եմ այն մարդուն որ՝ իւր խօսքն փողով չի  
ծախիլ,

Այնպէս մարդն ճշմարիտ է և ճշմարտութեան արմատ է։

Ես չեմ սիրում այնպէս մարդուն, որ լեզուն չար է՝  
բարի չէ,

Այնպէս մարդն զնասակար՝ թունաւոր օձ, և կարիճ է.

Ես չեմ սիրում այն մարդուն որ՝ գործումն քաջ և արի չէ,  
Այնպէս մարդու հոգս ու ցաւը՝ անքանակ ու անփարատ է։

Ես սիրում եմ այնպէս մարդուն, որի խօսքն ճշմարիտ է,  
Ճշմարտախօս մարդն անդին՝ ջաւահիր ու մարդարիտ է.  
Ես սիրում եմ այն մարդուն որ, իմաստուն՝ բայց միամիտ է,  
Այնպէս մարդն չարից և չար՝ փորձանքներից միշտ ազատ է։

Ես չեմ սիրում այնպէս մարդուն, որ մտքումը ոխ կը պահի,  
Այնպէս մարդն իւր ընկերի՝ վրայ վատ աչքով կը նայի.  
Ես չեմ սիրում այն մարդուն որ՝ ընկերից բան կը խնայի.  
Այնպէս մարդն քարասիրտ է, անողորմ է և ժլատ է։

Ես սիրում եմ այն մարդուն որ՝ հիւրասէր և մարդասէր է,  
Այնպէս մարդն կը կանաչէ, կծաղկէ, պտուղ կը բերէ.

Ես սիրում եմ այն մարդուն որ՝ նեղեալներին, որըին  
տէր է,  
Այնպէս մարդն ողորմած է, ձեռքն բաց է և առատ է:

Ես չեմ սիրում այն մարդուն որ՝ չի ունենալ բարի նպատակ,  
Այնպէս մարդը ուրիշներին՝ չի լինիլ բարի օրինակ.  
Ես չեմ սիրում այն մարդուն որ՝ չի սիրիլ թողնել յիշատակ,  
Այնպէս մարդն թէ ժլտ է, և ժլտալին համեմատ է:

Ես սիրում եմ այն մարդուն որ՝ մայրն սուրբ հոգւով  
լցուեցաւ,

Այնպէս մարդն երբ որ ծնուաւ, իւր հօր համր լեզուն  
բացաւ.

Ես սիրում եմ այն մարդուն որ՝ Տէրն ի նմանէ մկրտեցաւ,  
Այնպէս մարդն զօրաւոր է, եօթը անունով՝ մի հատ է:

Ես չեմ սիրում այն մարդուն որ՝ զուր տեղը մարդ  
կնախատէ,

Այնպէս մարդն մի ընկերից՝ միւսին սուտ կը դանդատէ.  
Ես չեմ սիրում այն մարդուն որ՝ մարդ կմատնէ կամ

կ'ատէ,  
Այնպէս մարդն ինչպէս յուղա՝ անիրաւ ու անհաւատ է:

Ես սիրում եմ այնպէս մարդուն, որ ինքն էլ մեզի սիրեց,  
Այնպէս մարդն եկաւ աշխարհ, զոհուեց մեզ համար՝ խաչ

կըեց.  
Ղետնդս սիրում եմ այն մարդուն որ՝ մեզի սահման օրէնք  
դրեց,

Այնպէս մարդն երկնքումն է, նա անմեղ ու անարատ է:

\* \*



Ոյս արեգակս վայր ընկաւ, հողին հաւասար դառաւ,  
Աշխարհս մթնեց ինձ համար՝ ցերեկ և գիշեր չկայ,  
Օրէց օր դարդս շատացաւ, հարիւր ու հազար դառաւ,  
Կրում եմ ես գիշեր ցերեկ, իմ ցաւերիս վերջ չկայ:

Ո՞ւր է այն դարդիմաց մարդն՝ որ հարցնի դարդ իմանայ,  
Կրէ ինձ հետ իմ կրածն, տարիներ ու դար դիմանայ.  
Թէ ցաւս պատմեմ մէկի մօտ, պէտք է հազար մարդ  
իմանայ,

Չկայ, մի այնպէս բարեկամ, սրտակից ընկեր չկայ:

Խաբեբայ, սուտ խօսող մարդն՝ աշխարհումս շատացել է,  
Սուտն ամեն տեղ տարածուել՝ չարն խիստ արմատացել է.  
Մեծ ու փոքր չեն ճանաչում, ժամանակն վատացել է,  
Քաշուել է խէր բարաքաթը, այսուհետեւ խէր չկայ:

Մէկ-մէկու խօսք են տալիս, խօսքի վերայ հաստատ չեն,  
Մի աւազանի որդիք են, մէկ-մէկու հարազատ չեն.

Այդ պատճառով էլ աշխարհի փորձանքներից աղատ չեն,  
Նեռը ծնուել է ոմանց մէջ՝ մարդկութեան պատկեր չկայ:

Փոքրները մեծի վերայ՝ ձեռք են բարձրացնում,  
Եղբայր եղբօր՝ որդին հօրը՝ էլ չէ ուրախացնում.

Ամեն մէկն իւր կամքին է, ավ է պտրում, հարցնում,  
Էլ մեծ չկայ, փոքր չկայ, ջահել չկայ, ծեր չկայ:

Իրար վրայ սուտ-սուտ խօսում՝ սուտ խօսքեր են հաստա-  
տում,

Ոչ իրար հաւատ ընծայում՝ ոչ իրար են հաւատում.  
Իրար համար սուտ վկայում, կաշառք, երդում են ուտում,  
Վերացել է խղճմտանքը, յոյս ու հաւատ սէր չկայ:

Տիրոջ խօսքերին չեն լսում, չէ խօսում ամեն բերան,  
Հոգերն ծախում են փողով, մոռացել են պատուիրան.  
Ամեն մարդ էլ աշխատում է՝ քաշել տանել դեպ իրան,  
Մէկ-մէկու բարին կամեցող, ողորմած որտեր չկայ:

Ի՞նչ կը լինի նեղ օրերում՝ ձեռ հասցնես եղբօրդ,  
Կարեացդ չափ՝ օգնես նորան, որքան կպատէ զօրդ,  
Դու որ զրկում ես եղբօրդ, ու անպատվում ես հօրդ,  
Չես ամաչում, կամ վախենում, միթէ դլխիդ Տէր չկայ:

Ո՞վ հարուստներ, աղքատներին պաշտպանեցէք պահեցէք,  
Տիսուր, տրտում անձանց սրտեր՝ սփոփեցէք շահեցէք.  
Ո՞վ փոքրներ, դուք ծերերին՝ հնազանդուեցէք նայեցէք,  
Այսպէս արէք ձեր գարունը՝ դլիներիդ ձմեռ չկայ:

Ո՞վ մարդասէք Տէր Աստուած իմ, միսյն թեղի յուսած եմ,  
Փութա փրկել ինձ փորձանքից, ես շատ տարակուած եմ,  
Ղեօնդս իւզածազկի պէս՝ դաշտում մենակ բուսած եմ,  
Այսպում եմ վառ աշեխ տակ, վրէս մէկ ստուեր չկայ:

Ա. Ն. Ռ. Ա. Գ. Զ. Բ.



Ադամիթ աղջիկ, անաստուած,  
Ինձի ուր թողիր գնացիր.  
Սիրտս հոգս ու ցաւով լցուած,  
Հարիւր, ըիւր թողիր գնացիր:  
  
Զիգարս սրով ծակեցիր,  
Սրտիս մէջը կրակեցիր.  
Բերանս իսպառ փակեցիր,  
Եղուս լուս թողիր գնացիր:

Մինչև ծաղկեցիր ծլեցիր,  
Սիրտ ու ջիգարս հալեցիր.  
Ուրախութիւնս խեցիր,  
Ինձ տիսուր թողիր գնացիր:

Դու էիր լոյսն իմ աչաց,  
Նոր ծլած ծաղկած, կանաչած.  
Չեռքերս ծոցումս խաչած,  
Վիզս ծուռ թողիր գնացիր:

Աչքս միշտ քո ճանապարին,  
Կուլայ արտասուք ու արին.  
Ղեօնդի պէս խեղճ օտարին,  
Տուիր սուր՝ թողիր գնացիր,

\* \* \*



ոդով սրտով սիրած եարս,  
Չտուին ինձ՝ չհաս արին.

Դանակով սիրտ ու ջիգարս,  
Կտրատեցին մաս-մաս արին:

Թշնամիք շուրջս պատեցին,  
Ինձ իմ սիրածից գատեցին.  
Անխիղճ անօրէն դատեցին,  
Այսպէս մեծ պատուհաս արին:

Հոտաւէտ վարդս քաղեցին,  
Օտարի վերայ ծախեցին.  
Սիրտ ու ջիգարս դաղեցին,  
Ինձի այսպէս միաս արին:

Հասէք Դեսնդի հարային,  
Մի նայէք փողին փարային,  
Ազատեցէք ձեր ծառային,  
Սպանեցին, անմաս արին:

\* \*



տար երկիր ման գալով՝ իմ գրքոյին գրեցի,  
Բայց շատերը չխմացան՝ ունեցած հանդամանքս.  
Շատ էլ նեղ օրեր տեսայ, և ոմանց էլ խնդրեցի,  
Եւ ոչ էլ չլսեց՝ խնդիրը ու աղաչանքս:  
  
Երկար կեանքս կարճանալով՝ քանի գնաց քչացաւ,  
Օտարութեամբ սիրոս հալուեց, անձս մաշուեց փչացաւ,  
Օրէց օր դարդո շատացաւ, ցաւերո չվերջացաւ,  
Ամեն գեղ դործ դրի վերքիս, բայց իզուր անցաւ ջանքս:  
  
Կեանքս մի ու վախով գնաց՝ տարիներով անցաւ,  
Կարճ կեանքիս մէջ երբէք չեղայ անդարդ ու անցաւ.  
Ցաւն ինձի միշտ չարչարեց հոգւով ու անձաւ,  
Բայց ոչով էլ չնկատեց իմ քաշած չարչարանքս:

Հաղար իննըն հարիւր թուին՝ փոխուեց իմ դրութիւնս,  
Էլ տանելու հալ չունեցայ, հատաւ համբերութիւնս.  
Այս թուիցն սկսեցի՝ դրել իմ դրութիւնս,  
Երեք տմիս շարունակ, այդ եղաւ աշխատանքս:

Մինչեւ երեք տեսեց ցաւս ու նեղութիւնս,  
Լաւ է օր չքայրայուեց և չքանդուեց իմ տունս,  
Մէկ սրտակից ոմն չեղաւ՝ գայ հարցնէ անունս,  
Հանդիպողն էլ յետ էր քաշվում, տեսնելով կերպարանքս:

Զհանդիպեց մի լաւ ընկեր, և ոչ էլ եղբայր ինձի,  
Մոռացան քոյր ու եղբայր, ծնողք հայր ու մայր ինձի.  
Ցաւն ուժու պակսեցրեց, ձգեց դէպի վայր ինձի,  
Քանի գնաց աւելացաւ, զօրացաւ տառապանքս:

Ցաւն շուտով յաղթեց ինձի և վայր ձգեց անկողին,  
Պատրաստ կացած կսպասէի, մեռնիլ զոհուիլ սև հողին.  
Ցանկարծ մի խորն հառաչելով յիշեցի ստեղծողին,  
Նա ուղարկեց ցաւիս ճարը, լսեց իմ հառաչանքս:

Մարդու մէկն այցելեց ինձ, դրութիւնս հարցրեց,  
Խղճաց վրաս, մօտեցաւ ինձ, և օդնութիւն հասցրեց.  
Մեռած սրտիս տիսրութիւնը՝ ուրախութեան դարձրեց,  
Վերցրեց անթիւ ցաւերս, նեղութիւն ու տանջանքս:

Նա ինձի քաջ յայտնի է, բարի մարդկանցից մէկն էր,  
Սիրտ տալրով ինձ, իմ գալիքն՝ կը խօսէր ու կը մեկնէր,  
Չեռքին ունէր ցաւիս դեղը՝ իմ վէրքերիս կը մեկնէր,  
Բժշկուելով նրա ձեռքից՝ ստացայ դեղարանքս:

Անոնս Դեսնդ է իմ, Դալաքօղլիանց ցեղէն եմ,  
Շամախոյ գտւառի մէջ՝ բնիկ Սաղիան գեղէն եմ.  
Արթիւն-իւղբաշի Սարդսեան, Խաչպանեանցի տղէն եմ,  
Օտար երկրում անցաւ օրս, դուր գնաց ամբողջ կեանքս:



10775

— 64 —

Գնա, ով իմ փոքրիկ գլքոյկ, քո երգերն տարածիր,  
իմ տխուր ու տրտում սրտիս՝ խոր վէրքերն փարատիր։—



ԳԻՆՆ է 50 Կ.



